

2019թ. ապրիլի

# ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



**European Bank**  
for Reconstruction and Development



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|             |                                                             |    |
|-------------|-------------------------------------------------------------|----|
| ԲԱԺԻՆ I:    | ՆՊԱՏԱԿ                                                      | 2  |
| ԲԱԺԻՆ II:   | ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ                                                | 2  |
| ԲԱԺԻՆ III:  | ՇՐՋԱՆԱԿ                                                     | 5  |
| ԲԱԺԻՆ IV:   | ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՉԱՏՈՒՄ, ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ | 35 |
| ԲԱԺԻՆ V:    | ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ                                        | 35 |
| ԲԱԺԻՆ VI:   | ՈՒԺԻ ՄԵՉ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ                                   | 36 |
| ԲԱԺԻՆ VII:  | ԲԱԺԻՆ VIIՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՅՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ                       | 36 |
| ԲԱԺԻՆ VIII: | ՎԵՐԱՆԱՅՈՒՄ և ՉԵԿՈՒՅՈՒՄ                                      | 36 |
| ԲԱԺԻՆ IX:   | ՀԱՐԱԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ                                          | 36 |

## ԲԱԺԻՆ I: ՆՊԱՏԱԿ

ՎՉԵԲ-ը հանձնառու է խթանել կայուն զարգացումը իր բոլոր ներդրումներում՝ որպես տնտեսական անցման գործընթացի առանցքային մասնակից: Նպատակ ունենալով ապահովել Բանկի կողմից իրականացվող ծրագրերի բնապահպանական և սոցիալական գործելակերպերի համապատասխանությունը ՎՉԵԲ-ի չափանիշներին՝ Բանկը պահանջում է, որ ծրագրերը համապատասխանեն ՎՉԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական քաղականությանը: Բացի այդ, Բանկից պահանջվում է ծրագրի վերաբերյալ որոշակի տեղեկություններ տրամադրել հանրությանը Բանկի՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության համաձայն՝ բարելավել թափանցիկությունը, հաշվետվողականությունը, հաղորդակցությունը ազդակիր շահագրգիռ կողմերի հետ և խթանելու արդյունավետ կառավարումը:

ՎՉԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմը (ԾՀԱՄ) էլ ավելի է ամրապնդում այս հանձնառությունը: ԾՀԱՄ-ն անկախ կերպով վերանայում է Բանկի կողմից ֆինանսավորված ծրագրերի վերաբերյալ անհատների և կազմակերպությունների կողմից բարձրացված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել կամ,

հավանաբար, կարող են վնաս պատճառել: Այս մեխանիզմի նպատակն է. պարզեցնել սոցիալական, բնապահպանական և հանրային հրապարակման խնդիրների լուծումը Ծրագրի շահագրգիռ կողմերի շրջանում, պարզել, թե արդյոք Բանկը հետևել է իր իսկ բնապահպանական և սոցիալական քաղականություններին և իր՝ Տեղեկատվության հասանելիության քաղականության մեջ ներառված՝ ծրագրերին առնչվող դրույթներին, և, եթե կիրառելի է, վերացնել ցանկացած առկա անհապատասխանություն նշված քաղաքականություններին՝ միաժամանակ կանխելով ապագայում Բանկի կողմից հնարավոր անհամապատասխանությունները:

ԾՀԱՄ-ն անկախ գործառույթ է, որը կառավարվում է Բանկի ներդրումային գործառնության սահմաններից դուրս (այսինքն՝ Բանկի կառավարման սահմաններից դուրս) և ուղղակիորեն հաշվետու է Տնօրենների խորհրդին՝ իր Վերահսկիչ հանձնաժողովի միջոցով:

Սույն Քաղաքականությունը փոխարինում է 2014թ.-ին ընդունված՝ Ծրագրերի բողոքարկման մեխանիզմի (ԾԲՄ) ընթացակարգի կանոնները:

## ԲԱԺԻՆ II: ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Քաղաքականության մեջ օգտագործված տերմիններն ունեն հետևյալ իմաստները.

### Տեղեկությունների հասանելիության քաղականություն

ՎՉԵԲ-ի՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականությունը (2019) կամ ՎՉԵԲ-ի՝ Տեղեկությունների հասանելիության վերաբերյալ քաղաքականության առավել վաղ տարբերակը, որն ուժի մեջ էր այն ժամանակ, երբ Ծրագիրը հաստատվել էր Խորհրդի կողմից, կամ, եթե Խորհուրդը պատվիրակել էր հաստատումը այլ լիազոր մարմնի՝ Բանկի ղեկավարության կողմից, այդ թվում՝ ցանկացած հարակից հրահանգի միջոցով,

### Տարեկան հաշվետվություն

ԾՀԱՄ-ի կողմից պատրաստված տարեկան հաշվետվությունը՝ սույն Քաղաքականության Բաժին VIII-ին համապատասխան,

### Գնահատման հաշվետվության

ԾՀԱՄ-ի կողմից պատրաստված գնահատման հաշվետվությունը՝ համաձայն սույն Քաղաքականության III Բաժնի 2.3-րդ արբերության,

### Վերահսկիչ հանձնաժողով

Խորհրդի վերահսկիչ հանձնաժողովը,

|                                                               |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |
|---------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>Բանկ (կամ ՎՁԵԲ)</b>                                        | Վերկառուցման և զարգացման եվրոպական բանկ,                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
| <b>Խորհուրդ</b>                                               | Բանկի տնօրենների խորհուրդը,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
| <b>Աշխատանքային օր</b>                                        | Աշխատանքային օր, երբ Բանկը բաց է Լոնդոնում կամ իր մշտական գրասենյակներում գործունեության համար,                                                                                                                                                                                                                                                                                                      |
| <b>Դեպք (դեպքի քննություն)</b>                                | Դիմումը գրանցելուց հետո դրա քննությունը սույն Քաղաքականության ներքո,                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
| <b>Դեպքերի հաշվառման գրանցամատյան</b>                         | սույն Քաղաքականության III Բաժնի 3.1-րդ պարբերության համաձայն ստեղծված՝ Դեպքերի հաշվառման գրանցամատյան, որը կարելի է գտնել ԾՀԱՄ-ի կայքում,                                                                                                                                                                                                                                                            |
| <b>Հաճախորդ</b>                                               | Անհատ(-ներ) և/կամ կազմակերպություն(-ներ), որը/որոնք պատասխանատու է (են) Ծրագրի իրականացման համար,                                                                                                                                                                                                                                                                                                    |
| <b>Համապատասխանության գնահատման վերաբերյալ հաշվետվություն</b> | Համապատասխանության գնահատման հաշվետվություն, որը սահմանված է սույն Քաղաքականության III Բաժնի պարբերություն 2.6-ում,                                                                                                                                                                                                                                                                                  |
| <b>Համապատասխանության ստուգման վերաբերյալ հաշվետվության</b>   | Համապատասխանության ստուգման վերաբերյալ հաշվետվություն, որը սահմանված է սույն Քաղաքականության III Բաժնի պարբերություն 2.7-ում,                                                                                                                                                                                                                                                                        |
| <b>Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն</b>            | ՎՁԵԲ-ի 2019թ.-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը կամ ծրագրի հաստատման պահին ուժի մեջ գտնվող բնապահպանական և սոցիալական քաղաքականության ավելի վաղ տարբերակը,                                                                                                                                                                                                                              |
| <b>Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)</b>     | Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ, որը հիմնվել է սույն Քաղաքականության շրջանակներում,                                                                                                                                                                                                                                                                                                      |
| <b>ԾՀԱՄ-ի Ղեկավար</b>                                         | the head of IPAM, responsible for the running of IPAM, the implementation of this Policy, and for making the decisions that are the responsibility of IPAM under this Policy;                                                                                                                                                                                                                        |
| <b>Կառավարման գործողությունների ծրագիր (ԿԳԾ)</b>              | Կառավարման գործողությունների ծրագիրը, որը ներկայացված է սույն Քաղաքականության III Բաժնի պարբերություն 2.7.1-ում,                                                                                                                                                                                                                                                                                     |
| <b>Մոնիթորինգի հաշվետվություն</b>                             | ԾՀԱՄ-ի կողմից պատրաստված՝ մոնիթորինգի հաշվետվություն, սույն Քաղաքականության III Բաժնի պարբերություն 2.5 կամ 2.8-ի համաձայն,                                                                                                                                                                                                                                                                          |
| <b>Կազմակերպություն</b>                                       | ցանկացած մարմին, միավորում կամ խումբ, որի շուրջ քաղաքացիական հասարակությունն ինքնակամ կազմակերպվում է՝ ներկայացնելով համայնքի կամ քաղաքացիական հասարակության կոնկրետ շահերը: Կազմակերպությունները ներառում են համայնքային կազմակերպություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ, բնիկների կազմակերպություններ, բիզնես ասոցիացիաներ և արհմիություններ, |

|                                                    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |
|----------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>Կողմեր</b>                                      | անհատներ, սուբյեկտներ և կազմակերպություններ, որոնք անմիջական հետաքրքրություն ունեն տվյալ դեպքի հանդեպ: Կողմերի կազմում կարող են լինել (բայց չեն սահմանափակվում նշվածներով) Դիմումատուները, նրանց Ներկայացուցիչները, եթե այդպիսիք կան, Բանկի համապատասխան վարչությունը, թիմը կամ ստորաբաժանումը, Հաճախորդը և Ծրագրի այլ ֆինանսավորողները կամ այլ սուբյեկտներ, որոնք պատասխանատու են Ծրագրի իրականացման համար,                                                                                                                                                                                                                                                                                                                              |
| <b>ԾՀՄ-ի ընթացակարգային կանոնները</b>              | 2014 թվականի Ծրագրերի բողոքարկման մեխանիզմի ընթացակարգային կանոնները,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |
| <b>Խնդիրների լուծման վերաբերյալ հաշվետվություն</b> | Խնդիրների լուծման վերաբերյալ հաշվետվություն, որը պատրաստվում է ԾՀՄ-ի կողմից՝ համաձայն սույն Քաղաքականության III Բաժնի պարբերություն 2.4-ի,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
| <b>Խնդիրների լուծման ամփոփագիր</b>                 | Խնդիրների լուծման ամփոփագիրը, որը պատրաստվում է ԾՀՄ-ի կողմից, համաձայն սույն Քաղաքականության III Բաժնի պարբերություն 2.4-ի,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
| <b>Գնումների կանոններ</b>                          | Բանկի՝ Գնումների կանոնները, ինչպես դրանք սահմանված են իր՝ 2017 թվականի նոյեմբերի 8-ի Կորպորատիվ գնումների քաղաքականությամբ, հարակից հրահանգով, ինչպես նաև ցանկացած կիրառելի ընթացակարգերով, որոնք ժամանակ առ ժամանակ ենթակա են փոփոխման,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |
| <b>Ծրագրի ազդակիր անձինք</b>                       | Մեկ կամ մի քանի անհատ, ովքեր ապրում են Ծրագրի կողմից ազդեցության ենթարկված կամ, հավանաբար, ապագայում ազդակիր տարածքում, ովքեր կրել են (կամ, հավանաբար, կրելու են) շրջակա միջավայրի, սոցիալական կամ մշակութային վնասներ՝ որպես Ծրագրի ուղղակի կամ անուղղակի արդյունք: Վնասը կարող է կապված լինել (բայց նաև չի սահմանափակվում) աշխատանքի և աշխատանքային պայմանների, առողջության և անվտանգության, աղտոտման, հողերի օտարման, հարկադիր վերաբնակեցման կամ տնտեսական տեղահանման, կենսաբազմազանության, պահպանվող տարածքների կամ կենդանի բնական պաշարների կայուն կառավարման վրա բացասական ազդեցության, նյութական կամ ոչ նյութական մշակութային ժառանգության կորստի, շահագրգիռ կողմերի ներգրավվածության կամ տեղեկությունների բացահայտման պակասի հետ, |
| <b>Նախագահ</b>                                     | Բանկի Նախագահը,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |
| <b>Ծրագիր</b>                                      | Բանկի ֆինանսավորման պայմանագրերում սահմանված աշխատանքների, ապրանքների, ծառայությունների և (կամ) բիզնես գործունեության տեսակների հավաքակազմ, որի ֆինանսավորման համար հաճախորդը դիմել է ՎՉԵԲ-ին, որն այնուհետև հաստատվում է Խորհրդի կողմից, կամ, եթե Խորհրդի կողմից նշանակվել է հաստատող մարմին՝ Բանկի ղեկավարության կողմից,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
| <b>Դիմում</b>                                      | Դիմումատուի կողմից սույն Քաղաքականության ներքո ԾՀՄ-ին ներկայացրած Դիմումը,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                |
| <b>Դիմումատու</b>                                  | անհատ (-ներ) կամ Կազմակերպություն (-ներ)՝ կախված դեպքի բնույթից, ովքեր ներկայացնում են Դիմումը,                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |
| <b>Ներկայացուցիչ</b>                               | ցանկացած անհատ (-ներ) կամ Կազմակերպություն (-ներ), ում ընտրում են Դիմող կողմերը իրենց ներկայացնելու համար՝ սույն Քաղաքականության սահմաններում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |

## **Հաշվեհարդար**

Ցանկացած վնասաբեր գործողություն, որն առաջարկվել է, որով սպառնացել են կամ, որը ձեռնարկվել է (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) ցանկացած անձի դեմ՝ նրան լռեցնելու, կանխելու նրա փոխգործակցությունը ԾՀԱՄ-ի հետ, կամ կանխելու Դիմումի ներկայացումը կամ դրա քննության ընթացքը: Հաշվեհարդարի տեսակները ներառում են ոտնձգություններ, ահաբեկման փորձեր, խտրական վերաբերմունք, իրավունքից զերծ պահելը, կենսապահովման միջոցները կամ հեղինակությունը վնասելու ռիսկերը և ֆիզիկական բռնության, քրեականացման կամ ազատությունից զրկելու սպառնալիքները:

## **Խոցելի անձինք**

Այն մարդիկ կամ խմբերը, ովքեր կարող են ավելի մեծ վնաս կրել Ծրագրի ազդեցությունից, քան մյուսները՝ իրենց մի շարք հատկանիշներով՝ սեռով, գենդերային ինքնությամբ, սեռական կողմնորոշմամբ, կրոնով, Էթնիկ պատկանելիությամբ, բնիկ լինելու կարգավիճակով, տարիքով (այդ թվում՝ երեխաներ, երիտասարդներ և տարեցներ), ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամությամբ, գրագիտության մակարդակով, քաղաքական հայացքներով կամ սոցիալական կարգավիճակով պայմանավորված: Խոցելի անձինք և (կամ) խմբերը կարող են նաև ներառել հետևյալ մարդկանց, բայց չեն սահմանափակվում դրանցով. խոցելի իրավիճակներում գտնվող մարդիկ, ինչպիսիք են աղքատության շեմից ցածր ապրող մարդիկ, հողագուրկ անձինք, մեկ անձի կողմից ղեկավարվող ընտանիքներ, բնական ռեսուրսներից կախում ունեցող համայնքներ, աշխատանքային միգրանտներ, փախստականներ, ներքին տեղահանված անձինք կամ այլ կերպ տեղահանվածներ, ովքեր, հավանաբար, պաշտպանված չեն ազգային օրենսդրությամբ և (կամ) միջազգային հանրային օրենքով:

## ԲԱԺԻՆ III: ԾՐԱԳՐԱԿ

### 1. ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎՈՐՈՒՄ

1.1 ԾՀԱՄ-ն ունի երկու լրացուցիչ, ոչ դատական և ոչ հակառակորդային գործառնություններ՝ ստացված Դիմումները դիտարկելու համար՝

- a) Խնդիրների լուծման գործառնությո՞ւնը, որը խրախուսում է երկխոսությունը Դիմումատուի և Հաճախորդի միջև՝ լուծելու Դիմումի հիմքում ընկած բնապահպանական, սոցիալական և հանրային հրապարակման խնդիրներն՝ առանց սխալը կամ մեղավորությունը որևէ մեկին վերագրելու: ԾՀԱՄ-ը շփվում է ծրագրի ազդակիր անձանց, հաճախորդների և այլ շահագրգիռ կողմերի հետ որպես չեզոք երրորդ կողմ, որպեսզի օգնի գտնել փոխընդունելի լուծումներ՝ խնդիրների լուծման ճկուն, փոխհամաձայնության վրա հիմնված մոտեցումների միջոցով, և
- b) Համապատասխանության գործառնությո՞ւնը, որը որոշում է, թե որքանով է ՎՉԵԲ-ը իր որևէ Ծրագրում հետևել իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ իր՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության մեջ ներառված՝ Ծրագրերին առնչվող համապատասխան դրույթներին: Որպես այդպիսին, Համապատասխանության գործառնությո՞ւնը վերաբերում է միայն Բանկի համապատասխանությանը, և ոչ թե՛ Հաճախորդի: ԾՀԱՄ-ը շփվում է Ծրագրի ազդակիր անձանց, Բանկի անձնակազմի, Հաճախորդների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ պարզելու, թե արդյո՞ք Բանկը իր գործողությունների կամ անգործության պատճառով ձախողել է պահպանել բնապահպանական և սոցիալական քաղաքականության որևէ դրույթ (ներառյալ ցանկացած դրույթ, որը Բանկից պահանջում է վերահսկել Հաճախորդի պարտավորությունները), կամ Տեղեկությունների

հասանելիության քաղաքականությամբ սահմանված՝ Ծրագրին վերաբերող դրույթները: Եթե պարզվում է, որ ՎՉԵԲ-ը չի համապատասխանում վերոնշյալ քաղաքականությունների պահանջներից որևէ մեկին, Համապատասխանության գործառնությո՞ւնը նաև առաջարկում է Ծրագրին վերաբերող և ընթացակարգային փոփոխություններ Բանկի պրակտիկայում՝ առկա անհամապատասխանությունը կարգավորելու, ապագայում անհամատասխանությունները կանխարգելելու և ինստիտուցիոնալ ուսուցմանն ու կարողությունների զարգացմանը նպաստելու նպատակով:

1.2 Այլ գործառնությո՞ւններ. ԾՀԱՄ-ի մանդատը ներառում է նաև հետևյալը.

- a) Բացահայտել ինստիտուցիոնալ այն գիտելիքները, որոնց օգնությամբ կարելի է տարբերակել ընդհանուր մարտահրավերները, կառուցողական առաջարկություններ ներկայացնել և նպաստել ՎՉԵԲ-ում շարունակական ուսուցման մշակույթին: ԾՀԱՄ-ի ինստիտուցիոնալ ուսուցման և խորհրդատվական գործառնությո՞ւնը հետ կապված մանրամասն դրույթները ներկայացված են պարբերություն 3.2-ում:
- b) Իրականացնել իրազեկում ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի շրջանում՝ ապահովելու ԾՀԱՄ-ի նպատակների, գործառնությունների և գործունեության մասին իմացությունը և դրանց ըմբռնումը: ԾՀԱՄ-ի իրազեկման գործառնությո՞ւնը վերաբերող մանրամասն դրույթները ներկայացված են 3.2 պարբերությունում:

### 1.3 Ուղեցույցային սկզբունքներ:

ԾՀԱՄ-ը իրականացնում է այս չորս գործառնությունները՝ առաջնորդվելով հետևյալ սկզբունքներով.

- a) Անկախություն և անկողմնակալություն՝ ձեռք բերելով բոլոր կողմերի վստահությունը ԾՀԱՄ-ի՝ Բանկից



անկախ լինելու և բոլոր Դեպքերի շահագրգիռ կողմերի հանդեպ արդարացի և օբյեկտիվ վերաբերմունք դրսևորելու շնորհիվ,

b) *Թափանցիկություն*՝ տեղեկացնելով Կողմերին Դեպքի ընթացքի, մեխանիզմի գործունեության և ԾՀԱՄ-ի միջոցով հնարավոր արդյունքների հասնելու մասին,

c) *Կանխատեսելիություն*՝ Առաջարկելով հստակ և կապակցված գործընթացներ ու ընթացակարգեր,

d) *Հավասարություն*՝ ապահովելով, որ բոլոր Կողմերի համար ողջամիտ սահմաններում հասանելի լինի տեղեկությունը առ այն, թե ինչպես ընդգրկվել ԾՀԱՄ-ի գործընթացներում արդարացի և տեղեկացված պայմաններով՝ միաժամանակ հարգելով գաղտնիության պահպանման պահանջները, և

e) *Հասանելիություն*՝ աշխատելով, որ ԾՀԱՄ-ից պոտենցիալ օգտվող անհատներն ու խմբերը տեղեկացված լինեն ԾՀԱՄ-ի մասին, հեշտացնելով հասանելիությունը, իր գործունեության մեջ հաշվի առնելով մշակութային և գենդերային խնդիրները, խթանելով ապահով մուտքը ԾՀԱՄ՝ ապահովելով Դեպքի ընթացքի գաղտնիությունը, գնահատելով հաշվեհադարի ռիսկերը և ձեռնարկելով ռիսկերի մեղմացման միջոցառումներ:

1.4 Հաշվետվողականությունը ՎՁԵԲ-ում լայնորեն կիրառվող գործառույթ է, որը ներառում է բազմաթիվ և փոխկապակցված դերեր ու պարտականություններ ԾՀԱՄ-ի, Խորհրդի և Բանկի ղեկավարության համար: ԾՀԱՄ-ի ղեկավարն առաջնորդում է Բանկի ծրագրերի հաշվետվողականության մանդատի իրականացումը սույն Քաղաքականության ներքո, համաձայն ստորև բերված պարբերություն 3.3-ի:

1.5 ԾՀԱՄ-ը գործում է անկախ կերպով՝ ուղղակիորեն զեկուցելով Խորհրդին: Վերահսկիչ հանձնաժողովի<sup>1</sup> դերերն ու պարտականությունները ԾՀԱՄ-ի առնչությամբ ներկայացված են այդ հանձնաժողովի տեխնիկական առաջադրանքի մեջ: ԾՀԱՄ-ի գործառնության վերաբերյալ դրույթները սահմանված են ստորև՝ պարբերություն 3.3-ում:

## 2. ԴԵՊՔԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ԾՀԱՄ-ի Դեպքերի վարման գործընթացը կարող է ներառել հետևյալ փուլերը (սակայն պարտադիր չէ, որ բոլորը) (Գծապատկեր 1).

a) Գրանցում


b) Գնահատում

c) **Տարբերակ A:** Խնդիրների լուծում, որին կհետևի Խնդիրների լուծման համաձայնագրի մոնիթորինգը, եթե կիրառելի է, և/կամ

**Տարբերակ B:** Համապատասխանության գնահատում, որին կհետևի Համապատասխանության ստուգման (վերանայման) և Կառավարման գործողությունների ծրագրի մոնիթորինգը, եթե կիրառելի է (տե՛ս Գծապատկեր 1-ը):

1 Վերահսկիչ հանձնաժողովը կամ որևէ այլ հանձնաժողով Խորհրդի ներքո, որին Խորհուրդը պատվիրակում է վերահսկման գործառույթը:

## Գծապատկեր 1. ԾՀԱՄ-ի Դեպքերի (գործերի) վարման գործընթացի գծապատկերը



\* Հնարավոր է Խնդրի լուծման գործընթացից հետո Դեպքի փոխանցումը Համապատասխանության գնահատման, եթե Դիմումատուն համոզված է, որ կա դրա անհրաժեշտությունը:

Դեպքի քննության յուրաքանչյուր փուլի նպատակները, չափանիշները, մոտեցումները, հաշվետվության արդյունքները և հնարավոր վերջնարդյունքները մանրամասնորեն ներկայացված են ստորև՝ 2-րդ պարբերության մեջ:

### 2.1 Դիմումի ներկայացում

#### ա) Ով կարող է Դիմում ներկայացնել.

- Դիմումը կարող է ներկայացվել անհատի (-ների) կողմից կամ Կազմակերպության (կազմակերպությունների) կողմից, ովքեր հավատացած են, որ ազդակիր են (կամ հավանական է, որ ազդակիր կլինեն) Ծրագրի պատճառով:
- ԾՀԱՄ-ը նաև կընդունի և կքննարկի այն Կազմակերպությունների կողմից ներկայացված Դիմումները, որոնք ուղղակիորեն կամ անձամբ չեն տուժել Ծրագրի գործունեությունից: Այս դեպքերում ԾՀԱՄ-ը հաշվի կառնի Դիմումի հանգամանքները և կսկսի

գրանցման գործընթացը, եթե Դիմումը բավարար տեղեկություններ է ներկայացնում հետևյալի մասին.

- Դիմում ներկայացնողի կողմից ապացույցներ առ այն, որ վերջինս գործակցել է Ծրագրի ազդակիր անձանց հետ մտահոգություն առաջացնող խնդրի առնչությամբ, եթե կան նման ազդակիր անձինք, ինչպես նաև վերջիններիս կողմից Դիմումի վերաբերյալ ներկայացված կարծիքները, և
- Պատճառները, որոնք թույլ չեն տալիս Ծրագրի ազդակիր անձանց անձամբ ներկայացնել Դիմումը:

Դիմումները, որոնք ներկայացված են այնպիսի Կազմակերպությունների կողմից, որոնք ուղղակիորեն կամ անձամբ չեն տուժել Ծրագրի գործունեությունից, կարող են դիտարկվել ԾՀԱՄ-ի՝ Համապատասխանության գործառնության սահմաններում, եթե դրանք համապատասխանաբար գրացվեն:

**b) Ինչպես ներկայացնել Դիմում ԾՀԱՄ-ին.** Դիմումները կարող են ԾՀԱՄ-ին ներկայացվել ցանկացած գրավոր ձևաչափով: Պարտադիր չլինելով կիրառման համար՝ ԾՀԱՄ-ի Դիմումի նմուշային ձևաթղթում առկա է Դիմում գրելու և ներկայացնելու Ուղեցույց, որը ներկայացված է նաև հավելված Ա-ում, ինչպես նաև առկա է ԾՀԱՄ-ի կայքում: Դիմումները կարող են ներկայացվել՝ օգտագործելով.

- i. ԾՀԱՄ-ի ապահով, կողմնորոշված առցանց Դիմումի ձևաթուղթը, որն առկա է ԾՀԱՄ-ի կայքում,
- ii. ԾՀԱՄ-ի Դիմումի ձևանմուշը (առկա է Հավելված Ա-ում) կամ
- iii. Որևէ այլ գրավոր ձևաչափ,

որը կտրամադրվի ԾՀԱՄ-ին էլ-փոստով, ֆաքսով, փոստով կամ անձամբ հետևյալ կոնտակտներով՝

**Էլ-փոստ՝** [ipam@ebrd.com](mailto:ipam@ebrd.com)  
**Հեռախոս՝** +44 7881013976  
**Ֆաքս՝** +44 20 7338 7633

**Փոստային հասցե՝**

Attn: Independent Project Accountability Mechanism  
European Bank for Reconstruction and Development  
One Exchange Square  
London  
United Kingdom  
EC2A 2JN

Դիմումները կարող են նաև ուղարկվել կամ առաքվել ՎՉԵԲ-ի մշտական ներկայացուցչության որևէ գրասենյակ (հասցեագրված՝ ԾՀԱՄ-ին, որի դեպքում տվյալ գրասենյակը կփոխանցի դիմումը ԾՀԱՄ-ին): Բանկի մշտական ներկայացուցչության գրասենյակների հասցեները առկա են հետևյալ հղմամբ՝ <https://www.ebrd.com/contacts.html>

**c) Ինչ է պետք ներառել Դիմումի մեջ.** Դիմումը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները,

- i. Դիմումը ներկայացնող անհատի (-ների) կամ Կազմակերպության (կազմակերպությունների) անունը (-ները),
  - a. Դիմողները կարող են խնդրել, որ Դիմումում նշված որոշ կամ բոլոր անձանց կամ Կազմակերպությունների ինքնությունը գաղտնի պահվի: ԾՀԱՄ-ը պարտավորվում է պահպանել Դիմողների ինքնության գաղտնիությունը, եթե դա հստակ պահանջվում է Դիմումի մեջ: Դիմումատուին կխնդրեն հիմնավորել, թե ինչու են նրանք հայցում գաղտնիություն Դիմումի մեջ, և, եթե Դիմումատուն նաև հայցում է, որ ԾՀԱՄ-ը կատարի հնարավոր հաշվեհարդարի ռիսկի գնահատում, գաղտնիության պահպանման հետ մեկտեղ, ԾՀԱՄ-ը կսկսի այդ գործընթացը, ինչպես սահմանված է պարբերություն 3.1 (Ժ)-ում: Գաղտնիության պահպանումը կդիտարկվի ԾՀԱՄ-ի կողմից հնարավորինս արագ՝ Դիմումը ստանալուն պես, մինչ ԾՀԱՄ-ի կողմից Դիմումի գրանցման հետ կապված որոշում կայացնելը: Կկիրառվեն գաղտնիության պահպանման համար անհրաժեշտ բոլոր ողջամիտ ջանքերը: Սակայն, եթե ԾՀԱՄ-ը, ողջամտության սահմաններում, գտնի, որ գաղտնիության պահպանումը կխոչընդոտի Դիմումի դիտարկմանը, այդ դեպքում ԾՀԱՄ-ն անհապաղ այդ մասին կտեղեկացնի Դիմումատուին: ԾՀԱՄ-ը և Դիմումատուն այնուհետև կամ համաձայնության կգան, թե ինչպես շարունակեն գործընթացը, կամ՝ անհամաձայնության դեպքում, ԾՀԱՄ-ը կդադարեցնի գործընթացը,

- ii. Դիմումատուների կոնտակտային տվյալները (ներառյալ բնակության կամ փոստային հասցեն և հնարավորության դեպքում՝ հեռախոսի համարը, էլ. փոստի հասցեն և / կամ ֆաքսի համարը),
  - iii. Խնդրահարույց Ծրագրի նկարագրություն, որը սահմանում է, որ այն ստացել է ներդրում ՎՇԵԲ-ի կողմից (օրինակ՝ Ծրագրի կամ Հաճախորդի անունը, Ծրագրի գտնվելու վայրը կամ ոլորտը),
  - iv. վնասի կամ հավանական վնասի նկարագրություն, որը Ծրագիրն, իրենց կարծիքով, պատճառել է կամ հավանական է, որ կպատճառի,
  - v. i) բարի կամքի որևէ դրսևորման նկարագրություն՝ Դիմումատուների կողմից Բանկի և/կամ Հաճախորդների հետ միասին լուծելու Դիմումում նկարագրված խնդրահարույց հարցերը և գործադրված ջանքերի արդյունքների նկարագրություն, կամ ii) բացատրություն, թե ինչու այդպիսի ջանքեր չեն ձեռնարկվել: ԾՀԱՄ-ը չի պահանջի բարի կամքի դրսևորման ապացույց, եթե կարծում է, որ այդպիսի ջանքերն ապարդյուն կամ վնասակար կլինեին Դիմումատուի կամ, կիրառելիության դեպքում, Ծրագրի ազդակիր անձանց համար:
- d) **Դիմումի մեջ կամավոր կարգով ներառվող կետեր.** Չնայած, որ սա պարտադիր պահանջ չէ՝ Դիմումատուն կարող է նաև տրամադրել հետևյալ տեղեկությունը Դիմումի մեջ՝ ըստ ցանկության կամ առկայության դեպքում.
- i. Այն արդյունքների նկարագրությունը, որոնց Դիմումատուն ցանկանում է հասնել ԾՀԱՄ-ի գործընթացների միջոցով,
  - ii. Արդյոք Դիմումատուն հետաքրքրված է Խնդիրների լուծման տարբերակով, Համապատասխանության ստուգման տարբերակով, թե երկու տարբերակով միաժամանակ՝ Դիմումի մեջ արծարծված խնդիրներին անդրադառնալու նպատակով,
  - iii. Բնապահպանական և սոցիալական քաղաքականության կամ Տեղեկությունների հասանելիության քաղակաքնության մեջ ներառված՝ կատարողականի նկատմամբ կոնկրետ պահանջները կամ դրույթները, որոնք, Դիմումատուների կարծիքով, խախտվել են Բանկի կողմից,
  - iv. Ցանկացած փաստաթուղթ Դիմումատուների, ՎՇԵԲ-ի և Հաճախորդների միջև տեղի ունեցած հաղորդակցության վերաբերյալ,
  - v. Դիմումին առնչվող ցանկացած այլ տեղեկություններ կամ նյութեր, որոնք կարող են ներառվել կամ կցվել Դիմումին, ներառյալ, բայց չսահմանափակելով՝ գրավոր կամ բանավոր հայտարարություններ, լուսանկարներ, պատկերներ, տեսանյութեր, ձայնագրություններ, ՉԼՄ-ների ռեպորտաժներ կամ քարտեզագրում և/կամ,
  - vi. Դիմումատուի համար ԾՀԱՄ-ի հետ հաղորդակցման **նախընտրելի** մեթոդը (օրինակ՝ էլ.-փոստ, հեռախոս, ֆաքս, փոստային նամակ, հաղորդակցման հավելվածներ, ինչպիսին է WhatsApp-ը, կամ կոնկրետ և ապահով հաղորդակցման որևէ այլ ուղի), և
  - vii. Ցանկացած մտահոգություն, որ կարող են ունենալ Դիմումատուները հաշվեհարդարի ռիսկերի պատճառով,
  - viii. **Ներկայացուցիչներ.** Ըստ ցանկության, Դիմումատուն կարող է ընտրել Ներկայացուցչի, ով կօգնի իրեն Դեպքի քննության ընթացքում: Այս դեպքում Դիմումը պետք է ներառի գրավոր ապացույց (Դիմողի կողմից ստորագրված նամակ) Ներկայացուցչի լիազորության մասին՝ գործելու Դիմումատուի անունից Դիմումի մեջ արծարծված հարցերով: Դիմումատուները պետք է նշեն, թե արդյոք նրանք ցանկանում են, որ իրենց Ներկայացուցիչը հանդես գա որպես կոնտակտ ԾՀԱՄ-ի և Դիմումատուների միջև ամբողջ պաշտոնական

հաղորդակցության համար, որի դեպքում պետք է նաև տրամադրեն Ներկայացուցիչների կոնտակտային տվյալները: Այնուամենայնիվ, ԾՀԱՄԸ-ը կարող է, անհրաժեշտության դեպքում, ուղղակիորեն հաղորդակցվել Դիմումատուների հետ:

## 2.2 Գրանցում

a) **Նպատակ.** Դիմումը ներկայացնելուց հետո սկսվում է 2.2.2 պարբերության մեջ նկարագրված՝ ստուգման գործընթացը: Գրանցման փուլի նպատակը Դիմումների ստուգումն է՝ հաստատելու, արդյոք նրանք համապատասխանում են ԾՀԱՄ-ում գրանցվելու պահանջներին, որից հետո կատարվում է 2.3-րդ պարբերությամբ նախատեսված՝ Դիմումի գնահատում:

b) **Չափանիշներ.** Դիմումը գրանցվում է, եթե.

- i. Այն ներառում է պարբերություն 2.1 (գ)-ում նշված պարտադիր տեղեկությունները,
- ii. Ըստ ԾՀԱՄ-ի այն բարձրացնում է հարցեր, որոնք վերաբերում են Բանկի բնապահպանական և սոցիալական քաղաքականությամբ սահմանված՝ Ծրագրերի առնչությամբ Բանկի հատուկ պարտավորություններին կամ Տեղեկություններին հասանելիության քաղաքականությամբ Բանկին ներկայացված հատուկ պարտավորություններին, և
- iii. Այն վերաբերում է Բանկի կոմիտեի հաստատված Ծրագրի, երբ Դիմումը ներկայացվում է 24 ամիսների ընթացքում այն ամսաթվից հետո, երբ Բանկը դադարեցնում է իր ֆինանսական հետաքրքրվածությունը Ծրագրի հանդեպ (օրինակ՝ ամբողջական վճարման, վաղաժամկետ մարման, բաժնետոմսերի վաճառքի արդյունքում կամ այլ պատճառներով):
  - a. Եթե Դիմումը վերաբերում է գործառնություններին, որոնք

դեռևս չեն հաստատվել, ԾՀԱՄ-ը տեղեկացնում է այդ մասին Բանկի ղեկավարությանը և համապատասխանաբար ծանուցում այդ մասին Խոհրդին և Դիմումատուին՝ Վերահսկիչ հանձնաժողովի միջոցով: Ծրագրի պատրաստման ընթացքում Բանկի ղեկավարությունը հաշվի կառնի Դիմումը և կտեղեկացնի ԾՀԱՄ-ին գրավոր կերպով, թե ինչ է ձեռնարկվում Դիմումատուի մտահոգությանը անդրադառնալու համար:

c) **Ծրջանակ և բացառություններ.**

- Դիմումը չի կարող գրանցվել, եթե այն չի համապատասխանում պարբերություն 2.2 (բ)-ում զետեղված պահանջներին, կամ եթե.
- i. այն բացառապես վերաբերում է ՎՉԵԲ-ի քաղաքականության համարժեքությանն ու համապատասխանությանը, Բանկի հիմնադրման մասին համաձայնագրին կամ ոչ գործառնական խնդիրներին, ինչպիսիք են ներքին կառավարումը կամ կադրային որոշումները կամ գործողությունները,
  - ii. այն վերաբերում է ոչ թե Բանկի կամ Հաճախորդի վերահսկողության տակ գտնվող հարցերին, այլ բացառապես երրորդ կողմի պարտականություններին, ինչպիսիք են բնապահպանական մարմինները և նրանց կողմից ազգային պահանջների կատարման համապատասխանությունը, կամ միջազգային օրենսդրությամբ կամ պայմանագրով երկրի պարտավորությունները,
  - iii. այն վերաբերում է հարցերին, որոնց մասին Դիմումն արդեն ուսումնասիրվել է ԾՀԱՄ-ի կամ դրա նախորդ կառույցի կողմից (Ծրագրի բողոքարկման մեխանիզմ կամ Պաշտպանության անկախ մեխանիզմ), բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվում են նոր ապացույցներ կամ հանգամանքներ, որոնք հայտնի չէին նախորդ Դիմումի պահին:

iv. այն ներկայացվել է անագնիվ, չկշռադատված կամ չարամիտ նպատակով՝ անձնական, մրցակցային կամ այլ առավելություն ձեռք բերելու կամ առևտրային կամ մտավոր սեփականության հետ կապված վեճերը լուծելու համար, և/կամ

v. այն բացառապես հայտարարություններ է պարունակում կեղծիքների, կոռուպցիայի, էթիկայի, բարեվարքության, պետական կառավարման, ներքին օրենսդրության, գնումների, պայմանագրային կամ մարդկային ռեսուրսների հետ կապված խնդիրների մասին:

a. Դիմումները, որոնք կեղծիքների, կոռուպցիայի, էթիկայի կամ բարեվարքության մասին մեղադրանքներ են ներկայացնում, կուղարկվեն Բանկի՝ Համապատասխանության գործառույթն իրականացնող բաժնի ղեկավարին:

b. Դիմումները, որոնք ներկայացնում են գնումների հետ կապված խնդիրները, կհասցեագրվեն Բանկի՝ Գնումների գործառույթն իրականացնող բաժնի ղեկավարին:

d) **Գրանցման համար այլ որոշիչ գործոններ.** Դիմումի գրանցման վերաբերյալ որոշում կայացնելիս, ԾՀԱՄ-ը նաև հաշվի է առնում հետևյալ գործոնները.

i. արդյոք դեպքի ուսումնասիրությունը կարող է կրկնօրինակել, խանգարել կամ խոչընդոտել նույն Դիմումատուի կողմից (կամ այն դեպքում, երբ Դիմումատուները անհատների խումբ կամ Կազմակերպություն են՝ տվյալ խմբի որոշ անդամների կողմից) ներկայացված որևէ այլ գործընթաց, որն առնչվում է նույն Ծրագրին և/կամ խնդրին, և

ii. արդյոք Դիմումատուն Դիմումի մեջ նշված խնդիրները հասցեագրել է Հաճախորդի՝ վեճերի լուծման կամ բողոքարկման մեխանիզմին,

համաֆինանսավորող հաստատության հաշվետվողականության անկախ մեխանիզմին, կամ դիմել է դատարան, արբիտրաժային դատարան կամ ներգրավել է վեճերի լուծման այլ մեխանիզմ, և, եթե դա այդպես է, ԾՀԱՄ-ը նաև հաշվի կառնի այդ գործողությունների կարգավիճակը:

e) **Մոտեցում.** ԾՀԱՄ-ը կստուգի Դիմումը՝ գրանցման մասին որոշում կայացնելու նպատակով՝ ուսումնասիրելով Դիմումի բովանդակությունը, Դիմումի մեջ ներառված ցանկացած օժանդակ փաստաթղթերը, առկայության դեպքում՝ հրապարակայնորեն հասանելի ցանկացած տեղեկատվություն, և (կամ) Բանկի ղեկավարության, Հաճախորդի կամ Դիմումատուների կողմից տրամադրված՝ Ծրագրին վերաբերող կամ համապատասխան այլ տեղեկություն:

f) **Դիմումի կասեցում.**

i. Եթե ԾՀԱՄ-ը չի կարողանում գրանցել Դիմումը, քանի որ այն չի բավարարում 2.2 (բ) կետով սահմանված չափանիշներին, և, ԾՀԱՄ-ի կարծիքով, Դիմումատուները կարող են շտկել այդ խնդիրը, ԾՀԱՄ-ն այդ մասին կտեղեկացնի Դիմումատուին (կամ նրանց Ներկայացուցիչներին, եթե այդպիսիք կան): Այնուհետև ԾՀԱՄ-ը կկասեցնի Գրանցման մասին որոշումը և Դիմումատուին հնարավորություն կընձեռի ողջամիտ ժամկետներում ուղղելու բացթողումը և կրկին ներկայացնելու Դիմումը, ինչպես նկարագրված է ստորև 3.1 (ծ) պարբերության մեջ:

ii. Եթե Դիմումատուն բարելավող ջանքեր չի գործադրել Բանկի և (կամ) Հաճախորդի հետ Դիմումում բարձրացված հարցերը լուծելու համար (և ԾՀԱՄ-ին գոհացուցիչ բացատրություն չի տվել այն մասին, թե ինչու այդ ջանքերը հնարավոր չէր գործադրել), ԾՀԱՄ-ը կխորհրդակցի Դիմումատուի հետ այդ բացթողման մասին,

a. Բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջը համարվում է ոչ պարտադիր 2.1 պարբերության գ) vi կետի համաձայն, ԾՀԱՄ-ը կարող է հետագայում կասեցնել Դիմումի գրանցումը և Դիմումը փոխանցել Բանկի ղեկավարությանը: Բանկի ղեկավարությունը կունենա առավելագույնը 45 աշխատանքային օր՝ ԾՀԱՄ-ի Ղեկավարի հայեցողությամբ, բարեխիղճ ջանքեր գործադրելու և բարձրացված հարցերը լուծելու համար (ինչպես նշված է 3.1-ին պարբերության ծ) կետում: Կասեցման ժամանակահատվածում ԾՀԱՄ-ը կհետևի ցանկացած կասեցված դիմումի առաջընթացին և կարգավիճակին: ԾՀԱՄ-ը կարող է դադարեցնել կասեցումը և գրանցել Դիմումը Դեպքի հետագա քննության համար, եթե Բանկի ղեկավարության կամ Հաճախորդի ջանքերը, ԾՀԱՄ-ի կարծիքով, չեն լուծել դիմումի մեջ բարձրացված խնդիրները: Նման որոշումներ կայացնելիս, ԾՀԱՄ-ը կխորհրդակցի Դիմումատուի և Բանկի ղեկավարության հետ:

գ) **Վերջնարոյունք.** ԾՀԱՄ-ը կգրանցի Դիմումը, եթե այն բավարարի պարբերություն 2.2 (բ)-ում սահմանված չափանիշներին, չհանդիսանա պարբերություն 2.2 (գ)-ում նշված բացառություններից որևէ մեկը, և եթե ԾՀԱՄ-ը համարի, որ գրանցումը տեղին է՝ հաշվի առնելով պարբերություն 2.2 (դ)-ում նշված՝ գրանցման այլ չափորոշիչները: ԾՀԱՄ-ը կծանուցի Դիմումատուին, Բանկի ղեկավարությանը և Հաճախորդին իր որոշման մասին և կներկայացնի Խորհրդին և Նախագահին նոր Դիմումների գրանցման մասին տեղեկությունը: Ըստ հայեցողության, ԾՀԱՄ-ը կարող է տեղեկացնել Խորհրդին նոր գրանցված Դիմումների մասին՝ որպես իր եռամսյակային հաշվետվության մաս, կամ ըստ անհրաժեշտության: ԾՀԱՄ-ը կհրապարակի գրանցված Դիմումները ԾՀԱՄ-ի Դեպքերի գրանցամատյանում:

i. Երբ Բանկի ղեկավարությունը ներկայացնում է նոր առաջարկվող ծրագիր Խորհրդին կամ համապատասխան հաստատող կողմին, (եթե Խորհուրդը պատվիրակել է հաստատումը մեկ այլ լիազոր մարմնի), այն առաջին հերթին պարզում է, թե արդյոք առաջարկվող Հաճախորդը երբևիցե հանդիսացել է ԾՀԱՄ-ի կամ դրա նախորդ կառույցների կողմից ուսումնասիրված Դեպքի կողմ, և որոշում է, թե արդյոք ԾՀԱՄ-ի տեսնակյունից այդ տեղեկությունը կամ Դեպքի վերջնարոյունքը պետք է ներկայացվեն Խորհրդին կամ համապատասխան հաստատողին՝ Ծրագիրը դիտարկման ներկայացնելիս:

ii. Գրանցումից հետ ԾՀԱՄ-ը փակում է Դեպքը, եթե ակնհայտ է դառնում, որ Դիմումի ուսումնասիրության որևէ փուլում պարբերություն 2.2 (բ)-ի չափանիշներն այլևս չեն պահպանվում կամ որ կիրառելի են պարբերություն 2.2 (գ)-ով սահմանված բացառությունները:

## 2.3 Գնահատում

a) **Նպատակ.** Դիմումի գրանցումից հետո սկսվում է Գնահատման գործընթացը, որը նկարագրված է պարբերություն 2.3-ում: Այս փուլի նպատակն այն է, որ ԾՀԱՄ-ը.

- i. հստակ պատկերացում կազմի Դիմումի մեջ արծարծված խնդիրների մասին,
- ii. Կողմերի հետ քննարկի Խնդիրների լուծման և Համապատասխանության գործառնությունները, դրանց շրջանակը և հնարավոր արդյունքները,
- iii. Գնահատի յուրաքանչյուր գործառնություն ընդգրկվելու՝ Կողմերի պատրաստակամությունը՝ հաշվի առնելով, թե Դիմողները որ գործառնություն են նախապատվություն տալիս,
- iv. Հաշվի առնի բողոքների լուծմանն ուղղված այլ ջանքերի նորացված կարգավիճակը՝ դրանց առկայության դեպքում, 2.2 (դ) պարբերության համաձայն, և

v. Որոշի, արդյոք.

- a. Դեպքը կփոխանցվի Խնդիրների լուծման մեխանիզմին՝ Դիմումատուի և Հաճախորդի (և այլ համապատասխան կողմի (-երի)) համաձայնությամբ, թե
- b. Դեպքը կփոխանցվի Համապատասխանության գնահատման մեխանիզմին, եթե Խնդիրների լուծման գործառույթն օգտագործելու վերաբերյալ չի ստացվել համաձայնություն ձեռք բերել՝ հիմնվելով Դիմումատուի հստակ խնդրանքի վրա, կամ
- c. Դեպքը կփակվի:

Եթե Կողմերը ցանկություն ունեն ընդգրկվել Խնդիրների լուծման ընթացակարգում, ապա, նախքան Դեպքը Համապատասխանության գնահատման մեխանիզմին փոխանցելը, կկիրառվի այս գործառույթը, եթե ԾՀԱՄ-ն այլ դիրքորոշում չունենա:

b) **Մոտեցում.** ԾՀԱՄ-ը գնահատում է Դեպքը՝

- i. հաշվի առնելով Դիմումի բովանդակությունը, Դիմումում ներառված բոլոր հիմնավորող փաստաթղթերը՝ ըստ անհրաժեշտության, և ցանկացած հրապարակային տեղեկություն,
- ii. հաշվի առնելով Բանկի ղեկավարության, Հաճախորդի և/կամ Դիմումատուների կողմից տրամադրված՝ Ծրագրին հատուկ կամ Ծրագրին առնչվող տեղեկատվությունը, գործակցելով Դիմումատուների, Ծրագրի այլ ազդակիր անձանց, Բանկի ղեկավարության, Հաճախորդի և այլ համապատասխան շահակիրների հետ, և
- iii. ձեռնարկելով տեղայն դեպի Ծրագրի տարածք, բացառությամբ այն բացառիկ դեպքերի, երբ այն համարվում է ոչ անհրաժեշտ ԾՀԱՄ-ի կողմից արդյունավետ գնահատման համար:

c) **Վերջնարդյունք և հաշվետվություն.**

Գնահատման փուլի ավարտին ԾՀԱՄ-ը ներկայացնում է Գնահատման հաշվետվություն, որը նկարագրում է Գնահատման գործընթացի վերջնարդյունքը, և

- i. այն ներկայացնում է Խորհրդին և Նախագահին՝ ի գիտություն, եթե ԾՀԱՄ-ն առաջարկում է շարունակել ընթացքը,
  - a) եթե Կողմերը համաձայնել են անցնել Խնդիրների լուծմանը, ապա Գնահատման հաշվետվությունն ուղեկցվում է Խնդիրների լուծման նախաձեռնության համար տեխնիկական առաջադրանքով, որը սահմանում է նախաձեռնության շրջանակը, օգտագործվող մեթոդները, ժամկետը, Խնդիրների լուծման իրականացման համար պահանջվող փորձառությունը և Խնդիրների լուծման այլ ուղղորդող սկզբունքները: Հնարավորության սահմաններում, տեխնիկական առաջադրանքը մշակելիս՝ ԾՀԱՄ-ը խորհրդակցում է Կողմերի հետ, կամ
- ii. այն ներկայացնում է Խորհրդի հաստատմանը՝ առանց առարկության Դեպքը փակելու նպատակով, եթե ԾՀԱՄ-ն առաջարկում է փակել Դեպքը:

Յուրաքանչյուր դեպքում ԾՀԱՄ-ը տրամադրում է Գնահատման հաշվետվությունը Դիմումատուներին, Բանկի ղեկավարությանը և Հաճախորդին, և այն հրատարակում է Դեպքերի հաշվառման գրանցամատյանում:

## 2.4 Խնդիրների լուծում

- a) **Նպատակ.** Խնդիրների լուծման նպատակն է.
  - i. դյուրինացնել երկխոսությունը Կողմերի միջև,
  - ii. հետամուտ լինել բոլոր Կողմերի համար ընդունելի լուծումների, որոնցով կլուծվեն Դիմումի մեջ բարձրացված խնդիրները, և



- iii. նպաստել Կողմերի միջև համաձայնագրերի կնքմանը:
- b) **Մոտեցում.** Կողմերի միջև խնդիրների լուծմանը նպաստելու նպատակին համապատասխան՝ ԾՀԱՄ-ը.
- հաշվի է առնում Դեպքի բոլոր հանգամանքները (ներառյալ՝ բարձրացված խնդիրների բնույթը, դրանց հրատապությունը, և հաջողության ողջամիտ հավանականությունը)՝ Խնդիրների լուծման ամենահամապատասխան մոտեցումը վերհանելու նպատակով: Մոտեցումները կընտրվեն Կողմերի հետ խորհրդակցելով, և դրանք կարող են ներառել. դյուրացված երկխոսություն, միջնորդություն, հաշտեցում, տեղեկատվության փոխանակում, համատեղ փաստահավաք գործունեություն կամ աջակցվող բանակցություն,
  - ներգրավում է արտաքին խորհրդատուների՝ Գնումների կանոնների և պարբերություն 3.1 (i)- ի համաձայն երկխոսության գործընթացին աջակցելու և այն դյուրացնելու նպատակով այն դեպքում, երբ ԾՀԱՄ-ի կողմից դա անհրաժեշտ է համարվում, և
  - չի սատարում ՎՁԵԲ-ի քաղաքականություններին հակասող կամ որևէ գործող օրենքի խախտմամբ համաձայնագրերը:
- c) **Դադարեցում.** Խնդիրների լուծման գործընթացը կարող դադարեցվել ցանկացած ժամանակ.
- ԾՀԱՄ-ի կողմից, եթե ԾՀԱՄ-ի տեսանկյունից, Կողմերի հետ խորհրդակցությունից հետո այլևս հավանական չէ, որ Խնդիրների լուծումը կհանգեցնի դրական վերջնարդյունքի, և/կամ Խնդիրների լուծման գործընթացը դադարել է լինել ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ինչի պարագայում ԾՀԱՄ-ը գրավոր ծանուցում է բոլոր Կողմերին, կամ
- ii. Կողմերից որևէ մեկի կողմից. Խնդիրների լուծումը կամավոր գործընթաց է, և Դիմումատուներն ու Հանախորդները կարող են ցանկացած պահի դուրս գալ դրանից:
- d) **Հաշվետվություն.** Խնդիրների լուծման փուլի ավարտին ԾՀԱՄ-ը.
- կազմում է Խնդիրների լուծման հաշվետվության նախագիծ, որտեղ ներկայացվում են նախաձեռնության վերջնարդյունքները, և շրջանառում է այն բոլոր Կողմերին՝ ի գիտություն: Եթե, գաղտնիության սահմանափակումներով պայմանավորված՝ Կողմերն անհրաժեշտ են համարում, ապա կազմվում է Խնդիրների լուծման ամփոփագիր հրապարակման նպատակներով,
  - ներկայացնում է Խնդիրների լուծման վերջնական հաշվետվությունը, կամ, անհրաժեշտության դեպքում, Խնդիրների լուծման վերջնական ամփոփագիրը Խորհրդին և Նախագահին՝ ի գիտություն,
  - Կողմերին տրամադրում է Խնդիրների լուծման վերջնական հաշվետվությունը կամ Ամփոփագիրը, և
  - Դեպքերի հաշվառման գրանցամատյանում հրապարակում է Խնդիրների լուծման հաշվետվությունը (կամ Ամփոփագիրը, եթե գաղտնիության սահմանափակումներն արգելում են Խնդիրների լուծման ամբողջական հաշվետվության հրապարակումը):
- e) **Վերջնարդյունք.**
- Համաձայնություն ձեռք բերելու դեպքում՝ ԾՀԱՄ-ը մոնիթորինգի է ենթարկում դրա համաձայն Կողմերի ստանձնած հանձնառությունների իրականացումը՝ համաձայն պարբերություն 2.5- ի, կամ
  - եթե համաձայնություն չի ձեռք բերվում կամ պարբերություն 2.4(գ)- ի համաձայն տեղի է ունենում վաղաժամկետ դադարեցում, ապա ԾՀԱՄ-ը փակում է Դեպքը, կամ

- iii. Դիմումատուների կողմից դիմելու պարագայում, երկու դեպքում էլ ԾՀԱՄ-ը Դեպքը փոխանցում է Համապատասխանության գնահատման՝ համաձայն պարբերություն 2.6- ի, և
- iv. հաշվի առնելով գաղտնիության սահմանափակումները՝ ԾՀԱՄ-ը Բանկի ղեկավարությանը և/կամ Խորհրդին տրամադրում է Դիմումից, Խնդիրների լուծման նախաձեռնությունից կամ դրա վերջնարդյունքներից բխող ինստիտուցիոնալ գիտելիքները և ասոցացվող առաջարկությունները:

## 2.5 Խնդիրների լուծման մոնիթորինգ

- a) **Նպատակ.** ԾՀԱՄ-ը մոնիթորինգի է ենթարկում Խնդիրների լուծման մեխանիզմի միջոցով ձեռք բերված՝ կողմերի բոլոր համաձայնությունների իրականացումը:
- b) **Զափանիշներ.** Խնդիրների լուծման համաձայնագրերը համարվում են իրականացված, եթե դրանք բավարարում են հետևյալ չափանիշներին.
  - i. այդ համաձայնագրերում Կողմերի ստանձնած հանձնառություններն արդյունավետորեն իրագործվել են, և
  - ii. իրականացման ժամանակացույցերի ժամկետները պահպանվել են:
- c) **Մոտեցում.** Մոնիթորինգի իր գործունեության շրջանակում ԾՀԱՄ-ը.
  - i. խորհրդակցում է Դիմումատուների, Հաճախորդի, Բանկի ղեկավարության և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ,
  - ii. հաշվի է առնում Ծրագրի փաստաթղթերը, Դիմումատուների (կամ նրանց Ներկայացուցիչների, եթե այդպիսիք կան), Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերը և ցանկացած հրապարակային տեղեկություն,

- iii. ձեռնարկում է տեղայց դեպի Ծրագրի տարածք, եթե ԾՀԱՄ-ն այն անհրաժեշտ է համարում, և
- iv. ներգրավում է հատուկ տեխնիկական խնդիրների գծով խորհրդատուների՝ ԾՀԱՄ-ի կողմից անհրաժեշտ համարվելու դեպքում: Խորհրդատուների ներգրավումը իրականացվում է համաձայն Գնումների կանոնների և պարբերություն 3.1(i)- ի:

### d) **Մոնիթորինգի հաշվետվություն.**

ԾՀԱՄ-ը ներկայացնում է Մոնիթորինգի հաշվետվություն առնվազն կիսամյակային կտրվածքով.

- i. յուրաքանչյուր բաց Դեպքի առնչությամբ ԾՀԱՄ-ի մոնիթորինգի ընթացիկ գործունեությունը նկարագրելու նպատակով, և
- ii. Խնդիրների լուծման յուրաքանչյուր համաձայնագրի իրականացման կարգավիճակի մասով ընթացիկ տեղեկություն տրամադրելու նպատակով այնքան ժամանակ, մինչև ԾՀԱՄ-ը կորոշի, որ Խնդիրների լուծման համապատասխան համաձայնագրի լիարժեք իրականացումը հասցվել է ավարտին:

ԾՀԱՄ-ը Կողմերին ներկայացնում է Մոնիթորինգի հաշվետվությունների նախագծերը՝ մեկնաբանություններ ստանալու նպատակով, և հաշվի է առնում այդ բոլոր մեկնաբանությունները Մոնիթորինգի հաշվետվությունները վերջնականացնելիս: Մոնիթորինգի հաշվետվությունները ներկայացվում են Խորհրդին և Նախագահին՝ ի գիտություն, տրամադրվում Դիմումատուներին, Բանկի ղեկավարությանը և Հաճախորդին, և հրապարակվում Դեպքերի հաշվառման գրանցամատյանում: Անհրաժեշտության դեպքում, ԾՀԱՄ-ը Խորհրդին հաղորդում է Խնդիրների լուծման համաձայնագրերի իրականացման հետ կապված ցանկացած խնդրի մասին՝ որպես իր եռամսյակային հաշվետվության մաս կամ ըստ անհրաժեշտության: Ինչպես սահմանված է

պարբերություն 2.5(բ)- ում, մոնիթորինգի ենթարկվող ԴեպքերԴեպքերը փակվում են այն բանից հետո, երբ ԾՀԱՄ-ը որոշում է, որ Խնդիրների լուծման համապատասխան համաձայնագրի լիարժեք իրականացումը հասցվել է ավարտին:

## 2.6 Համապատասխանության գնահատում

- a) **Նպատակ.** Համապատասխանության գնահատման նպատակն է գնահատել, թե արդյոք Դիմումն ընդունելի է Համապատասխանության վերանայման համար:
- b) **Զափանիշներ.** Դեպքը համապատասխանում է Համապատասխանության վերանայման համար անհրաժեշտ չափանիշներին, եթե ԾՀԱՄ-ը համարում է, որ:
- i. ըստ նախնական դիտարկման, պարզվում է, որ Ծրագիրը կարող է պատճառած լինել կամ, հավանաբար, կարող է պատճառել ուղղակի կամ անուղղակի և նյութական վնաս Դիմումատուներին (կամ այլ կերպ՝ Ծրագրի համապատասխան ազդակի անձանց), և
  - ii. որոշ բաներ մատնանշում են, որ Բանկը կարող է կատարած չլինել Բնապահպանական և սոցիալական քաղաքականության որևէ դրույթ (ներառյալ ցանկացած դրույթ, որով Բանկից պահանջվում մոնիթորինգի ենթարկել Հաճախորդի հանձնառությունները), կամ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին հատուկ դրույթները, որոնք ուժի մեջ են եղել Ծրագրի հաստատման պահին:

Համապատասխանության գնահատման ընթացքում ցանկացած ժամանակ Բանկի ղեկավարությունը կարող է համաձայնել, որ Դեպքը բավարարում է Համապատասխանության Վերնայման համար անհրաժեշտ չափանիշներին՝ Համապատասխանության վերանայման նախաձեռնումն արագացնելու նպատակով:

- c) **Մոտեցում.** ԾՀԱՄ-ը գնահատում է Գործը՝ դիտարկելով Գնահատման փուլի ընթացքում հավաքագրված փաստաթղթերը և տեղեկատվությունը, ինչպես նաև՝ Ծրագրին ներհատուկ և հրապարակային տեղեկատվությունը: Այս փուլում, ԾՀԱՄ-ը նաև.
- i. քննարկում է Դիմումատուների, Բանկի ղեկավարության, Հաճախորդի և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ,
  - ii. ԾՀԱՄ-ի կողմից ղեկավարության պատասխանը պահանջվելու դեպքում դիտարկում է Բանկի ղեկավարության գրավոր պատասխանը Դիմումին, որն ընդհանուր ներկայացնում է Բանկի կողմից ձեռնարկված քայլերը՝ իր համապատասխանությունը Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ Տեղեկությունների հասանելիության քաղաքականությանն ապահովելու նպատակով, և
  - iii. դիտարկում է Հաճախորդի գրավոր պատասխանը Դիմումին այն դեպքում, երբ Հաճախորդն ընտրել է ներկայացնել պատասխան:
- d) **Վերջնարդյունք և Հաշվետվություն.** Համապատասխանության գնահատման փուլի ավարտին ԾՀԱՄ-ը կազմում է Համապատասխանության գնահատման հաշվետվություն՝ ներկայացնելով իր եզրահանգումները, և
- i. այն ներկայացնում է Խորհրդին և Նախագահին՝ ի գիտություն, եթե այն առաջարկում է անցնել Համապատասխանության վերանայմանը՝ որոշելով, որ պարբերություն 2.6 (բ)- ում սահմանված չափանիշները բավարարվել են: Համապատասխանության գնահատման հաշվետվությունը ներկայացվում է Համապատասխանության վերանայման տեխնիկական առաջադրանքի հետ միասին, որը կազմվում է Դիմումում բարձրացված խնդիրների հիման վրա և, որը նախատեսում է

Վերանայման իրականացման համար պահանջվող շրջանակը, մեթոդները և փորձառության տեսակը՝ ըստ անհրաժեշտության, ինչպես նաև Համապատասխանության վերանայման այլ ուղղորդող սկզբունքները: Հնարավորության սահմաններում, տեխնիկական առաջադրանքը մշակելիս ԾՀԱՄ-ը խորհրդակցում է Կողմերի հետ, կամ

- ii. այն ներկայացնում է Խորհրդի հաստատմանն առանց առարկությունների, եթե ԾՀԱՄ-ն առաջարկում է Դեպքը փակել՝ որոշելով, որ պարբերություն 2.6(բ)-ում սահմանված չափանիշները չեն բավարարվել:

Ցանկացած դեպքում ԾՀԱՄ-ը տրամադրում է Համապատասխանության գնահատման հաշվետվությունը Դիմումատուներին, Բանկի ղեկավարությանը և Հաճախորդին, և այն հրապարակում է Դեպքերի հաշվառման գրանցամատյանում:

## 2.7 Համապատասխանության վերանայում

- a) **Նպատակ.** Համապատասխանության վերանայման նպատակն է որոշել, թե արդյոք Բանկը՝ իր գործողություններով կամ անգործությամբ հաստատված Ծրագրի շրջանակում չի կատարել Բնապահպանական և սոցիալական քաղաքականության կամ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին ներհատուկ դրույթները: Այն դեպքում, երբ ԾՀԱՄ-ը եզրակացնում է, որ Բանկը չի համապատասխանել այդ Քաղաքականություններից որևէ մեկին, ԾՀԱՄ-ն առաջարկում է Բանկի գործողություններին կամ բացթողումներին վերաբերող ուղղիչ փոփոխություններ՝ համաձայն սույն պարբերություն 2.7-ի: Եթե պարզվում է, որ ՎՁԵԲ-ը չի համապատասխանել այդ քաղաքականություններին, ապա այս փուլի հետագա նպատակներն են.

- i. առաջարկել Ծրագրին ներհատուկ գործողություններ՝ Բանկը Ծրագրի առնչությամբ համապատասխանության բերելու նպատակով, և վերացնել անհամապատասխանության վերլուծության եզրահանգումներում նշված վնասին կամ հնարավոր վնասին,
- ii. առաջարկել ՎՁԵԲ-ի գործելակերպերի, ընթացակարգերի, ուղեցույցի և համակարգերի փոփոխություններ, որոնք իրականացվելու են, ինչպես տվյալ Ծրագրի, այնպես էլ այլ Ծրագրերի մասով անհամապատասխանության ընթացիկ կամ ապագա իրավիճակներից խուսափելու նպատակով, և
- iii. խթանել ինստիտուցիոնալ գիտելիքների և կարողությունների զարգացումը:

Համապատասխանության վերանայումը չի գնահատում Հաճախորդի համապատասխանությունը կամ կատարողականը. այն գնահատում է Ծրագրի առնչությամբ Բանկի համապատասխանությունը Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին ներհատուկ դրույթներին:

- b) **Զափանիշներ.** համարվում է, որ Բանկը չի համապատասխանել պահանջներին, եթե ԾՀԱՄ-ը որոշում է, որ Բանկը՝ իր գործողություններով կամ անգործությամբ չի համապատասխանում Ծրագրի առնչությամբ՝ Բնապահպանական և սոցիալական քաղաքականության որևէ դրույթի (ներառալ՝ ցանկացած դրույթ, որով Բանկից պահանջվում է մոնիթորինգի ենթարկել Հաճախորդի հանձնառությունները), կամ Տեղեկատվության հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին ներհատուկ դրույթներին:
- c) **Մոտեցում.** Համապատասխանության վերանայման ընթացքում ԾՀԱՄ-ը քննում է Դեպքը պարբերություն 2.6(դ)-ով նախատեսված տեխնիկական

առաջադրանքի հիման վրա: ԾՀԱՄ-ը դիտարկում է նախորդ փուլերում հավաքագրված փաստաթղթերը և տեղեկատվությունը, ինչպես նաև՝ Ծրագրին ներհատուկ կամ հրապարակային որևէ տեղեկատվություն: Մասնավորապես, որպես Համապատասխանության վերանայման բաղկացուցիչ մաս, ԾՀԱՄ-ը.

- i. քննարկում է Դիմումատուների, Բանկի ղեկավարության, Հաճախորդի և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ,
- ii. ձեռնարկում է տեղայն դեպի Ծրագրի տարածք, բացառությամբ այն բացառիկ դեպքերի, երբ ԾՀԱՄ-ի կողմից գնահատման համար այն համարվում է ոչ անհրաժեշտ արդյունավետ, և/կամ
- iii. ներգրավում է հատուկ տեխնիկական խնդիրների գծով խորհրդատուների, եթե ԾՀԱՄ-ը դա անհրաժեշտ է համարում: Խորհրդատուների ներգրավումն իրականացվում է համաձայն Գնումների կանոնների և պարբերություն 3.1(i)- ի:

d) **Համապատասխանության վերանայման հաշվետվություն.**

Համապատասխանության վերանայման ավարտից հետո ԾՀԱՄ-ը պատրաստում է Համապատասխանության վերանայման հաշվետվություն, որտեղ ներկայացվում են նրա եզրահանգումները: Եթե ԾՀԱՄ-ը գտնում է, որ Բանկը չի համապատասխանում Ծրագրի առնչությամբ՝ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը և/կամ Տեղեկատվության հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին ներհատուկ դրույթներին, ապա Համապատասխանության վերանայման հաշվետվությունը.

- i. վեր է հանում Բանկի առանձին գործողությունները (կամ անգործությունը), որոնք հանգեցրել են անհամապատասխանության մասին եզրակացությանը, և

- ii. Բանկի ղեկավարությանը տրամադրում է հատուկ առաջարկություններ՝ անհամապատասխանության եզրահանգումներին անդրադառնալու նպատակով.

- a. Ծրագրի մակարդակում՝ վերհանելով Ծրագրին ներհատուկ գործողությունները Բանկը համապատասխանության բերելու նպատակով, և վերացնելու անհամապատասխանության եզրահանգումներում նշված վնասը կամ հնարավոր վնասը,
- b. Ընթացակարգային և համակարգային մակարդակներում՝ վերհանելով ՎՉԵԲ-ի գործելակերպերի, ընթացակարգերի, ուղեցույցի և համակարգերի փոփոխությունները՝ Բանկը համապատասխանության բերելու և Ծրագրի մասով Դիմումում տվյալ Ծրագրի, ինչպես նաև այլ Ծրագրերի ընթացքում նմանատիպ իրավիճակների կրկնությունից խուսափելու նպատակով:

ԾՀԱՄ-ի առաջարկությունները հաշվի են առնում Բանկի կամ Հաճախորդի՝ Ծրագրին առնչվող նախկին հանձնառությունները, և կարող են չառաջարկել փոխհատուցման տրամադրում Դիմումատուներին՝ ի հավելում այն փոխհատուցման, որը կարող է հստակորեն նախատեսված լինել Բնապահպանական և սոցիալական քաղաքականությամբ, և

- iii. նկարագրել Կառավարման գործողությունների ծրագրի մոնիթորինգը, որը կնախաձեռնվի Կառավարման գործողությունների ծրագիրը կազմելուց և հաստատելուց հետո:

Այնուհետև, ԾՀԱՄ-ը շրջանառում է Համապատասխանության վերանայման հաշվետվությունը Կողմերին՝ մեկնաբանություններ ստանալու նպատակով, և հաշվի է առնում այդ մեկնաբանություններից յուրաքանչյուրը Համապատասխանության վերանայման հաշվետվությունը վերջնական տեսքի բերելիս:

**2.7.1 ԾՀԱՄ-ի կողմից Բանկի անհամապատասխանությունը պարզելուն հաջորդող գործընթացը.**

**a) Կառավարման գործողությունների ծրագրի մշակում.**

Անհամապատասխանությունը պարզելուց հետո ԾՀԱՄ-ը Համապատասխանության վերանայման հաշվետվությունն ուղարկում է Բանկի ղեկավարությանը՝ դրան ի պատասխան Կառավարման գործողությունների ծրագիր պատրաստելու նպատակով: Անհամապատասխանության յուրաքանչյուր եզրահանգման մասով Կառավարման գործողությունների ծրագիրը վեր է հանում.

- i. Բանկի կողմից իրականացվելիք Ծրագրին ներհատուկ գործողություններ՝ Ծրագիրը համապատասխանության բերելու և անհամապատասխանության եզրահանգումներին ասոցացվող վնասը կամ հնարավոր վնասը վերացնելու նպատակով, Համապատասխանության վերանայման հաշվետվության առաջարկություններին համապատասխան,
- ii. ՎՉԵԲ-ի գործընթացների, ընթացակարգերի, ուղեցույցի կամ համակարգերի փոփոխություններ՝ Բանկը համապատասխանության բերելու և (Դիմումում նշված՝ տվյալ Ծրագրի, ինչպես նաև այլ Ծրագրերի մասով) նմանատիպ իրավիճակների կրկնությունից խուսափելու նպատակով, Համապատասխանության վերանայման հաշվետվության առաջարկություններին համապատասխան,
- iii. իրականացման պլան և ժամանակացույց, որոնց պետք է հետևել՝ Կառավարման գործողությունների ծրագրի հանձնառությունները կատարելու նպատակով, և

iv. Կառավարման գործողությունների ծրագրի իրականացման համար պահանջվող մարդկային և ֆինանսական ռեսուրսների գնահատում:

**b) Դեկլարության արձագանքի մշակում. Բանկի ղեկավարությունը կարող է նաև պատրաստել**

Համապատասխանության վերանայման հաշվետվության եզրահանգումներին ուղղված՝ Դեկլարության արձագանքը, եթե դա նպատակահարմար է համարում:

**c) Կառավարման գործողությունների ծրագրի և Դեկլարության արձագանքի շրջանառում.**

Բանկի ղեկավարությունը ԾՀԱՄ-ին ներկայացնում է Կառավարման գործողությունների ծրագրի նախագիծը (և Դեկլարության արձագանքը, եթե այդպիսին կա): Դրանք ստանալուց հետո ԾՀԱՄ-ը Կառավարման գործողությունների ծրագրի նախագիծն ուղարկում է Դիմումատուներին (կամ նրանց Ներկայացուցիչներին, եթե այդպիսիք կան) վերանայման և մեկնաբանություններ ստանալու նպատակով, և կցում Համապատասխանության վերանայման հաշվետվությունը՝ ի գիտություն:

**d) Համապատասխանության վերանայման հաշվետվության վերջնականացում.**

Կառավարման գործողությունների ծրագրի վերաբերյալ Դիմումատուների կամ Ներկայացուցիչների մեկնաբանությունները ստանալուց հետո ԾՀԱՄ-ը հնարավորություն ունի վերանայել Համապատասխանության վերանայման հաշվետվության առաջարկությունները (բայց ոչ եզրահանգումները)՝ փաստաթուղթը վերջնականացնելիս հաշվի առնելով Դիմումատուների կամ Ներկայացուցիչների մեկնաբանությունները:

ե) **Կառավարման գործողությունների ծրագրի վերջնականացում.** ա)

Կառավարման գործողությունների ծրագրի վերաբերյալ Դիմումատուների կամ Ներկայացուցիչների մեկնաբանությունները, եթե այդպիսիք լինեն, և բ) Համապատասխանության վերանայման վերջնական հաշվետվությունը ստանալուց հետո Բանկի ղեկավարությունն ունի Կառավարման գործողությունների ծրագիրը վերանայելու հնարավորություն՝ փաստաթուղթը վերջնականացնելիս հաշվի առնելով Դիմումատուների կամ Ներկայացուցիչների մեկնաբանությունները և Համապատասխանության վերանայման հաշվետվության խմբագրված առաջարկությունները, եթե այդպիսիք լինեն:

բ) **Համապատասխանության վերանայման փաստաթղթերի ներկայացում և հրապարակում, եթե համարվի, որ Բանկը չի համապատասխանել Քաղաքականություններին.**

Ծրագրի առնչությամբ անհամապատասխանությունն բացահայտելու դեպքում, ԾՀԱՄ-ը Նախագահին և Խորհրդին ներկայացնում է Համապատասխանության վերանայման վերջնական հաշվետվությունը, Կառավարման Գործողությունների վերջնական ծրագիրը, Ղեկավարության արձագանքը՝ այդպիսին լինելու դեպքում, Դիմումատուների կամ Ներկայացուցիչների մեկնաբանությունները Կառավարման գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ՝ այդպիսիսք լինելու դեպքում: Կառավարման գործողությունների ծրագիրը ներկայացվում է Խորհրդի որոշմանը, անհամապատասխանության եզրահանգմանն առնչվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են Խորհրդին՝ ի գիտություն:

ԾՀԱՄ-ի Ղեկավարը Խորհրդին հայտնում է, թե արդյոք ԾՀԱՄ-ի տեսակետից Կառավարման գործողությունների վերջնական ծրագրում վերհանված հանձնառությունները պատշաճ կերպով ուղղված են Համապատասխանության վերանայման հաշվետվության եզրահանգումներում և առաջարկություններում նկարագրված հարցերի լուծմանը: Խորհրդի որոշումն է՝ ամբողջությամբ ընդունել կամ մերժել Կառավարման գործողությունների ծրագիրը՝ հիմնվելով իր իսկ որոշման վրա առ այն, թե արդյոք Կառավարման գործողությունների ծրագիրը ա) պատշաճ կերպով անդրադառնում է Համապատասխանության վերանայման հաշվետվության եզրահանգումներին և առաջարկություններին և բ) կարող է Ծրագիրը համապատասխանության բերել Բնապահպանական և սոցիալական քաղաքականության և/կամ Տեղեկատվության հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին ներհատուկ դրույթների հետ: Եթե Խորհուրդը մերժում է Կառավարման գործողությունների ծրագիրը, ապա այն վերադարձվում է Բանկի ղեկավարությանը՝ վերանայման նպատակով և հետագայում կրկին ներկայացվում Խորհրդի հաստատմանը:

ԾՀԱՄ-ը Կողմերին տրամադրում է Համապատասխանության վերանայման վերջնական փաստաթղթերը (այսինքն՝ Համապատասխանության վերանայման վերջնական հաշվետվությունը, Կառավարման գործողությունների հաստատված ծրագիրը, Ղեկավարության արձագանքը, եթե այդպիսին կա, և Կառավարման գործողությունների ծրագրի վերաբերյալ Դիմումատուների և Ներկայացուցիչների մեկնաբանությունները), և դրանք հրապարակում Դեպքերի հաշվառման գրանցամատյանում:

## 2.7.2 ԾՀԱՄ-ի կողմից Բանկի համապատասխանությունը պարզելուն հաջորդող գործընթացը

- a) **Համապատասխանության վերանայման հաշվետվության ներկայացում և հրապարակում՝ Բանկը համապատասխան համարվելու դեպքում.** Ծրագրի առնչությամբ համապատասխանության եզրահանգման դեպքում՝ ԾՀԱՄ-ը ներկայացնում է Համապատասխանության վերանայման վերջնական հաշվետվությունը Նախագահին և Խորհրդին՝ ի գիտություն, և փակում է Դեպքը: ԾՀԱՄ-ը տրամադրում է Համապատասխանության վերանայման վերջնական հաշվետվությունը Կողմերին և այն հրապարակում Դեպքերի հաշվառման գրանցամատյանում:

## 2.8 Կառավարման գործողությունների ծրագրի մոնիթորինգ

- a) **Նպատակ.** ԾՀԱՄ-ը մոնիթորինգի է ենթարկում Կառավարման գործողությունների հաստատված ծրագրերի իրականացումը՝ Համապատասխանության վերանայման հաշվետվությունում նշված՝ անհամապատասխանության վերաբերյալ եզրահանգումների համատեքստում:
- b) **Չափանիշներ.** Կառավարման գործողությունների ծրագրերը համարվում են իրականացված, եթե դրանք բավարարում են հետևյալ չափանիշներին.
- դրանցում սահմանված իրականացման պլանները և հանձնառություններն արդյունավետ կերպով իրականացվել են, և
  - իրականացման ժամանակացույցերի ժամկետները պահպանվել են:
- c) **Մոտեցում.** Իր՝ մոնիթորինգի գործունեության շրջանակում ԾՀԱՄ-ը կարող է.

- խորհրդակցել Դիմումատուների, Հաճախորդի, Բանկի ղեկավարության և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ,
  - հաշվի առնել Ծրագրի փաստաթղթերը, Դիմումատուների (կամ նրանց Ներկայացուցիչների, եթե այդպիսիք կան) կողմից ներկայացված փաստաթղթերը և հրապարակային տեղեկությունները,
  - ուսումնասիրել Բանկի ղեկավարությունից ստացված՝ մոնիթորինգի վերջին թարմացումների բովանդակությունը: Բանկի ղեկավարությունից պահանջվում է առնվազն կիսամյակային կտրվածքով իրազեկել ԾՀԱՄ-ին հաստատված գործողությունների յուրաքանչյուր Կառավարման ծրագրի իրականացման կարգավիճակի մասին,
  - ձեռնարկել տեղայն դեպի Ծրագրի տարածք, եթե ԾՀԱՄ-ը դա անհրաժեշտ է համարում, կամ
  - ներգրավել հատուկ տեխնիկական խնդիրների գծով խորհրդատուների, եթե ԾՀԱՄ-ը դա անհրաժեշտ է համարում: Խորհրդատուների ներգրավումը կիրականացվի համաձայն Գնումների կանոնների և պարբերություն 3.1(i)- ի:
- d) **Մոնիթորինգի հաշվետվություն.** ԾՀԱՄ-ը առնվազն կիսամյակը մեկ թողարկում է Մոնիթորինգի հաշվետվություն՝
- յուրաքանչյուր բացված Դեպքի առնչությամբ ԾՀԱՄ-ի ընթացիկ մոնիթորինգի գործունեությունը նկարագրելու նպատակով, և
  - անհամապատասխանության վերաբերյալ եզրահանգումների համատեքստում Կառավարման գործողությունների յուրաքանչյուր ծրագրի իրականացման մասին ընթացիկ տեղեկություններ տրամադրելու նպատակով, այնքան ժամանակ, մինչև ԾՀԱՄ-ը կորոշի, որ Կառավարման գործողությունների ծրագիրը լիարժեք իրականացվել է:



Մոնիթորինգի հաշվետվությունները ներկայացվում են Խորհրդին և Նախագահին՝ ի գիտություն, տրամադրվում են Դիմումատուներին, Բանկի ղեկավարությանը և Հաճախորդին, և հրապարակվում Դեպքերի հաշվառման գրանցամատյանում: Անհրաժեշտության դեպքում, ԾՀԱՄ-ը Խորհրդին հաղորդում է Կառավարման գործողությունների ծրագրերի իրականացման կամ անհամապատասխանության հետ կապված ցանկացած չուծված խնդրի մասին՝ որպես իր եռամսյակային հաշվետվության մաս կամ ըստ անհրաժեշտության:

Մոնիթորինգի ենթակված Դեպքերը փակվում են այն բանից հետո, երբ ԾՀԱՄ-ը որոշում է, որ Կառավարման գործողությունների համապատասխան ծրագիրը լիարժեք իրագործվել է, համաձայն պարբերություն 2.8(բ)-ի:

### 3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### 3.1 Դեպքի քննության ընդհանուր դրույթներ

- a) **Դեպքի մասին տեղեկությունների տրամադրում.** ԾՀԱՄ-ը Դիմումատուներին (կամ նրանց Ներկայացուցիչներին, եթե այդպիսիք կան) պետք է ժամանակին տեղեկացնի Դիմումների կարգավիճակի մասին:
- b) **Դեպքերի հաշվառման գրանցամատյան.** ԾՀԱՄ-ը իր կայքում վարում է հանրության համար հասանելի՝ Դեպքերի հաշվառման գրանցամատյան, որը ներքին և արտաքին շահագրգիռ կողմերին տրամադրում է թարմացված տեղեկություններ յուրաքանչյուր գրանցված Դիմումի բնույթի և կարգավիճակի մասին: Դեպքերի հաշվառման գրանցամատյանում նշվում է ԾՀԱՄ-ի կողմից Դիմումի ստացման ամսաթիվը, Դիմումում նշված Ծրագրի, Ծրագիրն իրականացնող Հաճախորդի անունը և գտնվելու վայրը, և, գաղտնիության պահանջ չի ներկայացվում՝ Դիմումատուների (կամ նրանց Ներկայացուցիչների, եթե այդպիսիք կան) ինքնությունը: Սույն Քաղաքականության համաձայն՝ որպես Դեպքի բաղկացուցիչ մաս կազմված բոլոր հաշվետվությունները հրապարակվում են Դեպքերի հաշվառման գրանցամատյանում:

ԾՀԱՄ-ի հաշվետվություններում և Դեպքերի հաշվառման գրանցամատյանում նշվում է, թե որ դեպքերում տեղեկությունները չեն հրապարակվել գաղտնիության նկատառումներից ելնելով:

- c) **Մոտեցում, որը կիրառվում է Դեպքի քննության ընթացքում.** ԾՀԱՄ-ը ձգտում է.
  - i. իրականացնել Դեպքի ուսումնասիրությունը հնարավորինս արագ՝ առանց վնասելու յուրաքանչյուր Դեպքի քննության մանրակրկիտությունը, և

- ii. նվազագույնի հասցնել բոլոր կողմերի ամենօրյա աշխատանքների խափանումը, միաժամանակ գիտակցելով Դիմումատուների, Բանկի ղեկավարության, Հաճախորդների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի տեսակետները հաշվի առնելու կարևորությունը:

d) **Առնչվող Դիմումներ.** Եթե նույն Ծրագրի առնչությամբ ստացվում են երկու կամ ավելի Դիմումներ, և այդ Դիմումների բովանդակությունը ողջամիտ սահմաններում փոխկապակցված է, ապա ԾՀԱՄ-ը ծանուցում է Դիմումատուներին և կարող է պահանջել, որ.

- i. Դիմումներն ուսումնասիրվեն միասին, կամ
- ii. ավելի ուշ ստացված Դիմումի(-ների) քննությունը կասեցվի(-վեն) մինչև առաջին Դիմումի քննության ավարտը:

e) **Համագործակցություն Հաշվետվողականության այլ անկախ մեխանիզմների (ՀԱՄ)**

**հետ.** Եթե գրանցված Դիմումում նկարագրված՝ խնդրահարույց Ծրագիրը համաֆինանսավորվում է այլ հաստատությունների կողմից, ապա ԾՀԱՄ-ը ծանուցում է Դիմումի Գրանցման մասին համաֆինանսավորող հաստատության(-թյունների) հաշվետվողականության մեխանիզմին(-ներին), և խրախուսում նրանց ծանուցել իրենց համապատասխան ղեկավար թիմերին՝ իրազեկման և սեփական ծրագրերի գնահատումներում և/կամ ծրագրերի իրականացման գործընթացներում հաշվի առնելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում, ԾՀԱՄ-ը կարող է ծանուցել նաև այլ ՀԱՄ-ներին գրանցված Դիմումների մասին, որոնք ենթակա չեն համաֆինանսավորման, սակայն տեղակայված են գործառնությունների իրականացման փոխհատվող երկրներում և տարածքներում:

Եթե նույն Ծրագրի առնչությամբ ներկայացվում է նմանատիպ դիմում կամ բողոք այլ հաստատության(-թյունների) հաշվետվողականության մեխանիզմին(-ներին) և այդ Դիմումների բովանդակությունը ողջամիտ սահմաններում փոխկապակցված է, ապա ԾՀԱՄ-ը կարող է համագործակցել այդ մեխանիզմների հետ՝ Քաղաքականությանը համահունչ եղանակով, որպեսզի ապահովի Դեպքերի քննության արդյունավետությունը՝ խուսափելով կրկնվող գործընթացներից և բոլոր Կողմերին պատճառվող ավելորդ ընդհատումներից և խափանումներից: Եթե համատեղ Դեպքերի ընթացքում ԾՀԱՄ-ը համագործակցում է այլ ՀԱՄ-ների հետ, ապա այն պետք է ապահովի պատշաճ արձանագրությունների առկայությունը՝ համատեղ Դիմումների քննության խնդիրներին լուծում տալու նպատակով, ներառյալ (սակայն չսահմանափակվելով)՝ Դիմումատուի ինքնության գաղտնիությունը, Դիմումատուի, Հաճախորդի և Բանկի մասին տեղեկությունների փոխանակումը, հաշվեհարդարի ռիսկի գնահատումը և մեղմման միջոցառումները, և այլ խնդիրներ ըստ անհրաժեշտության: ԾՀԱՄ-ը անհրաժեշտության դեպքում կազմում է համագործակցության գրավոր համաձայնագրեր կամ Փոխըմբռնման հուշագրեր այլ համաֆինանսավորող հաստատության(-թյունների) հաշվետվողականության մեխանիզմին(-ներին) հետ՝ համատեղ քննվող Դեպքերի հետ կապված խնդիրներին լուծում տալու նպատակով:

Այն դեպքում, երբ դիմումը կամ բողոքը ներկայացվում է միայն համաֆինանսավորող հաստատությանը, սակայն այն առնչվում է ՎՉԵԲ-ի Հաճախորդին, և համաֆինանսավորող հաստատության ՀԱՄ-ը տեղեկացնում է այդ մասին ԾՀԱՄ-ին, ԾՀԱՄ-ը այդ մասին ամփոփ գեկույց է ներկայացնում Բանկի ղեկավարությանը, և, անհրաժեշտության դեպքում, Խորհուրդին՝ այդ Դեպքերի վերաբերյալ հրապարակային տեղեկությունների հասանելի դառնալուն պես:

f) **Տեղեկությունների հասանելիություն.**

**Դեպքի.** հետ կապված՝ ԾՀԱՄ-ի աշխատակիցների համար լիակատար և ուղղակի կերպով հասանելի են Բանկի անձնակազմի և Ծրագրի բոլոր ֆայլերը (ներառյալ էլեկտրոնային և թղթային ֆայլերը) ինչպես նաև պահարաններն ու այլ պահոցները:

Բանկի ղեկավարությունից և Բանկի ղեկավարության կողմից ներգրավված խորհրդատուներից պահանջվում է լիարժեքորեն համագործակցել ԾՀԱՄ-ի աշխատակիցների հետ:

Իր գործունեության ընթացքում հավաքված տեղեկությունների հրապարակումը ԾՀԱՄ-ի կողմից կատարվում է Տեղեկությունների հասանելիության քաղաքականության և գաղտնի տեղեկությունների նկատմամբ պահանջների համաձայն:

Անհրաժեշտության դեպքում և այլ աղբյուրներից տեղեկությունների անհասանելիության դեպքում, ԾՀԱՄ-ը կարող է համապատասխան Կողմերի հետ խորհրդակցելուց հետո հղում կատարել ընդհանուր առմամբ ոչ հրապարակային տեղեկություններին:

g) **Պայմանագրով սահմանվող պարտավորություններ.** Բանկի և Հաճախորդների միջև ֆինանսավորման համաձայնագրերը ներառելու են պահանջ Հաճախորդին՝ ԾՀԱՄ-ին տրամադրել Դեպքին առնչվող և Ծրագրին ներհատուկ տեղեկությունները՝ Բանկի կողմից ողջամիտ սահմաններում հարցում ստանալուց հետո և համաձայն ցանկացած կիրառելի օրենքների և կանոնակարգերի:

h) **Շահերի բախում.** ԾՀԱՄ աշխատակազմից և ԾՀԱՄ-ի կողմից ներգրավված խորհրդատուներից ակնկալվում է անկողմնակալ և ակախ գործելակերպ:

ԾՀԱՄ-ի աշխատակազմը կամ ԾՀԱՄ-ի կողմից ներգրավված խորհրդատուները, որոնք Դեպքի առնչությամբ ունեն շահերի բախման խնդիրներ, պետք է

անմիջապես տեղեկացնեն այդ մասին ԾՀԱՄ-ի Ղեկավարին և դուրս գան Դեպքի քննության գործընթացից:

Եթե ԾՀԱՄ-ի Ղեկավարն առնչվում է Դեպքի քննության հետ կապված շահերի բախման խնդրի, նա պետք է անմիջապես այդ մասին տեղեկացնի Խորհրդին, դուրս գա Դեպքի քննության գործընթացից և հանձնարարի ԾՀԱՄ-ի աշխատակազմից որևէ մեկին կատարել իր՝ Դեպքի քննությանն առնչվող պարտականությունները:

i) **Խորհրդատուներ.** ԾՀԱՄ-ի գործառույթները կատարելու ժամանակ ԾՀԱՄ-ի կողմից ներգրավված խորհրդատուները գործելու են իրենց անհատական ներուժին համապատասխան, ենթակա են արտոնությունների և անձեռնմխելիության, ինչպես նաև Վարքագծի կանոնակարգի դրույթներին, շահերի բախման կանոններին և գաղտնիության ապահովման դրույթներին որպես Բանկի համար առաքելություններ իրականացնող փորձագետներ: Խորհրդատուները գործելու են ԾՀԱՄ-ի Ղեկավարի վերահսկողության ներքո:

j) **Դիմումների ազդեցությունը Բանկի ծրագրերի և արտակարգ միջոցառումների վրա.** Դիմումի գրանցումը ինքն իրենով չի նշանակում Ծրագրի նկատմամբ Բանկի հետաքրքրության կասեցում: Այնուամենայնիվ, եթե Դիմումն ուսումնասիրելու ընթացքում որևէ պահի ԾՀԱՄ-ը ենթադրի, որ Բանկի կողմից Ծրագրի հետ կապված շարունակական գործունեությունը կամ Ծրագրին առնչվող ֆինանսավորման տրամադրումը կարող է լուրջ և անդառնալի վնաս հասցնել, ԾՀԱՄ-ը կարող է միջանկյալ առաջարկություն ներկայացնել Բանկի կողմից ուղղիչ միջոցառումների իրականացման համար՝ ներառյալ Բանկի կողմից Ծրագրի և դրա հետ առնչվող հետագա ֆինանսավորման կասեցում: Առաջարկության վերաբերյալ որոշումը կընդունվի Խորհրդի կամ ՎԶԵԲ-ի ցանկացած այլ իրավասու մարմնի կողմից, որին Խորհուրդը

փոխանցել է Ծրագրի հաստատման լիազորությունները, և նրանք պետք է քննեն, արդյոք Բանկն իրավունք ունի ձեռնարկել ցանկացած նմանատիպ առաջարկվող միջոց՝ հաշվի առնելով գործող օրենքներն ու կանոնակարգերը, ինչպես նաև գործող պայմանագրային պայմանավորվածությունները: ԾՀԱՄ-ի առաջարկություններն ու վերջնական որոշումը կիրառարկվեն Դեպքերի հաշվառման գրանցամատյանում:

- k) **Մոտեցումներ հաշվեհարդարի հետ կապված խնդիրներին.** ԾՀԱՄ-ը չի հանդուրժում Դիմումատուների կամ ԾՀԱՄ-ի գործընթացում ներգրավված որևէ այլ անձի նկատմամբ հաշվեհարդարի գործողությունները և մերժում է սպառնալիքի, ահաբեկման, ռոնտագությունների, բռնությունների կամ խտրականության ցանկացած ձև՝ հիմնվելով այն բանի վրա, որ Դիմումատուները իրականացրել են մտահոգություններ բարձրաձայնելու իրենց իրավունքը:
- ԾՀԱՄ-ը պարտավորվում է քայլեր ձեռնարկել՝ ա) գնահատելու ԾՀԱՄ-ի գործընթացներում և իրազեկման գործընթացներում ներգրավված անձանց նկատմամբ հաշվեհարդարի ռիսկերը, բ) խորհրդակցելով Դիմումատուների (կամ նրանց ներկայացուցիչների, եթե կան այդպիսիք) հետ՝ իրականացնել Դիմումների և իրազեկման գործընթացների հետ կապված հաշվեհարդարի ռիսկերի մեղմացման գործողությունները, եթե Դիմումատուները (կամ նրանց ներկայացուցիչները, եթե կան այդպիսիք) տեղեկացրել են ԾՀԱՄ-ին հաշվեհարդարի հետ կապված մտահոգությունների մասին: Նման դեպքերում ԾՀԱՄ-ը որպես Դիմումի գրանցման գործընթացի մի մաս գրասենյակային ստուգում կիրականացնի ռիսկային միջավայրի և Դիմումատուների կամ ԾՀԱՄ-ի գործընթացներում ներգրավված այլ անձանց նկատմամբ հաշվեհարդարի պոտենցիալ կամ փաստացի ռիսկի վերաբերյալ և կքննարկի գործողությունները, որոնք անհրաժեշտ է իրականացնել: ԾՀԱՄ-ը չի

հավակնում փոխարինել ազգային կամ միջազգային դատական մարմիններին, պաշտպանության ծառայություններին և իրավապահ մարմիններին, որոնց գործառույթների մեջ է մտնում նմանատիպ Դեպքերում հանրությանը պաշտպանելը:

- l) **Ֆինանսական հետաքրքրվածության կորուստ.** Եթե Դեպքի քննության ընթացքում Բանկը դադարի ֆինանսական հետաքրքրվածություն ունենալ համապատասխան Ծրագրի նկատմամբ՝ ամբողջական մարումների, վաղաժամկետ մարման, բաժնետոմսերի վաճառքի կամ որևէ այլ պատճառով, ԾՀԱՄ-ը կշարունակի.
- i. Համապատասխանության գնահատման կամ ստուգման ընթացքում գնահատել Բանկի համապատասխանությունը՝ ըստ 2.6 - 2.7 պարբերությունների: Այնուամենայնիվ, ԾՀԱՄ-ի կողմից Համապատասխանության ստուգման հաշվետվության մեջ արված առաջարկություններն ու Բանկի պարտավորությունները, որոնք ներկայացված են Կառավարման գործողությունների ցանկացած հաջորդ ծրագրում, կարող են հաշվի առնել Հաճախորդի հետ հարաբերությունների կասեցումը, կամ
- ii. Խնդիրների լուծման ժամանակ դյուրինացնել Կողմերի միջև երկխոսությունն՝ ըստ պարբերություն 2.4-ի, բացի այն դեպքերից, երբ նախաձեռնությունը դադրեցվել է. i) Կողմի՝ Խնդիրների լուծման նախաձեռնությունից դուրս գալու պատճառով, կամ ii) եթե ԾՀԱՄ-ը որոշի, որ գործընթացը չի հանգեցնի դրական արդյունքի՝ ինչպես նշված է պարբերություն 2.4 գ) և դ)-ում,
- iii. Կառավարման գործողությունների ծրագրի և Խնդիրների լուծման համաձայնագրի մշտադիտարկման ընթացքում վերահսկել Կառավարման գործողությունների ծրագիրը կամ Խնդիրների լուծման համաձայնագիրը՝ ըստ պարբերություններ 2.5-ի և 2.8-ի: Այնուամենայնիվ, Կառավարման

գործողությունների ծրագրի կամ  
Խնդիրների լուծմասան համաձայնագրի  
իրականացումն ըստ 2.5 և 2.8  
պարբերություններում սահմանված  
չափորոշիչների գնահատելու  
Ժամանակ ԾՀԱՄ-ը հաշվի է առնելու  
Հաճախորդի հետ հարաբերությունների  
դադարեցումը:

- m) **Ֆինանսական հետաքրքրվածության  
բացակայություն.** Եթե Դիմումի  
գրանցման պահին Բանկն ամբողջական  
մարումների, վաղաժամկետ մարման,  
բաժնետոմսերի վաճառքի կամ որևէ  
այլ պատճառով Ֆինանսական  
հետաքրքրվածություն չունի  
համապատասխան Ծրագրի նկատմամբ,  
ապա Դեպքն ուղղակիորեն փոխանցվում է  
Համապատասխանության գնահատմանը  
և չի համարվում Խնդիրների  
լուծման գործառույթի պանաջների  
համապատասխանող: Եթե նման Դեպքը  
համարվում է Համապատասխանության  
ստուգման համար ընդունելի, ապա  
Համապատասխանության ստուգման  
հաշվետվության մեջ արված ԾՀԱՄ-ի  
առաջարկությունները և Բանկի՝  
Կառավարման գործողությունների  
ցանկացած հաջորդ ծրագրում  
ներկայացված պարտավորությունները  
կարող են հաշվի առնել Հաճախորդի հետ  
հարաբերությունների դադարեցումը:
- n) **Ժամկետներ.** Դիմումը ստանալուց հետո  
ԾՀԱՄ-ը փորձելու է քննել Դեպքը Աղյուսակ  
1-ում ներկայացված ժամկետներում:

| Փուլ                                | Հիմնական գործողություններ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |
|-------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>Դիմումի ստացում</b>              | <ul style="list-style-type: none"> <li>Դիմումի ստացման հաստատում. որքան հնարավոր է արագ և ստացման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրերի ընթացքում:</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
| <b>Գրանցում</b>                     | <ul style="list-style-type: none"> <li>Գրանցման մասին որոշում. Դիմումի ստացման հաստատման ամսաթվին հաջորդող 21 աշխատանքային օրերի ընթացքում: <ul style="list-style-type: none"> <li>Այն դեպքերում, երբ ԾՀԱՄ-ի կողմից Դիմումը հաստատելու նպատակով Դիմումատուներից հավելյալ տեղեկություններ են պահանջվում՝ անհրաժեշտ տեղեկությունները տրամադրելու համար վերջիններիս տրամադրվում է ևս 15 աշխատանքային օր՝ սկսած ԾՀԱՄ-ի՝ անհրաժեշտ տեղեկությունների հայցման օրվանից:</li> <li>Եթե Դիմումը կասեցվել է (և ուղարկվել է Բանկի համապատասխան վարչություն՝ լուծելու այն խնդիրները, որոնք բարձրաձայնվել են առանց Դիմումի գրանցման՝ համաձայն պարբերություն 2.2(գ)-ի), Բանկի ղեկավարությանը կտրվի առավելագույնը 45 աշխատանքային օր (ԾՀԱՄ-ի հայեցողությամբ), որպեսզի նա բարեխիղճ ջանքեր գործադրի՝ լուծելու Դիմումի մեջ բարձրացված բնապահպանական, սոցիալական և հանրային ոլորտների տեղեկությունների հրապարակմանն առնչվող խնդիրները նախքան ԾՀԱՄ-ը կրննի կասեցումը վերացնելու հարցը:</li> </ul> </li> </ul>                                                                                      |
| <b>Գնահատում</b>                    | <ul style="list-style-type: none"> <li>Գնահատման գործընթացի ավարտ և գնահատման հաշվետվության ներկայացում Խորհրդին՝ դիմումի գրանցմանը հաջորդող 40 աշխատանքային օրերի ընթացքում:</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |
| <b>Խնդիրների լուծում</b>            | <ul style="list-style-type: none"> <li>Խնդիրների լուծման գործընթացի ավարտ. Կարող է տարբեր տևողություններ ունենալ՝ ըստ բնույթի, բարդության, հարցերի շրջանակների և այլ գործոնների, ինչպիսիք են, օրինակ՝ նախաձեռնության ընթացքում Կողմերի ներգրավվածությունը և որոշումները: Խնդիրների լուծման ժամանակացույցը որոշվում է Դիմումատուների, Հաճախորդի և նախաձեռնության այլ Կողմերի հետ համատեղ: Ակնկալվում է, որ խնդիրների լուծման գործընթացն ավարտի է հասցվելու Կողմերի՝ խնդրին լուծում տալու վերաբերյալ որոշմանը հաջորդող մեկ (1) տարվա ընթացքում, սակայն Կողմերի և ԾՀԱՄ-ի համաձայնության դեպքում գործընթացի տևողությունը կարող է երկարաձգվել:</li> <li>Դիմումատուները, Հաճախորդներն ու Խնդրի լուծման նախաձեռնության այլ Կողմերը ԾՀԱՄ-ի՝ Խնդիրների լուծման հաշվետվության նախագիծը շրջանառության մեջ մտցնելուց հետո կունենան 10 աշխատանքային օր՝ սահմանելու, թե արդյոք այն կարող է հրապարակվել, կամ մեկնաբանություններ ներկայացնելու գաղնտիության սահմանափակումների կապակցությամբ:</li> </ul>                                                                                      |
| <b>Համապատասխանության գնահատում</b> | <ul style="list-style-type: none"> <li>Այն դեպքում, երբ ԾՀԱՄ-ը խորհուրդ է տալիս փակել Դեպքը, գրանցվում է Համապատասխանության գնահատման ավարտ, որին հետևում է Համապատասխանության գնահատման հաշվետվության ներկայացումը Խորհրդին՝ Վերահսկիչ հանձնաժողովի միջոցով, Համապատասխանության գնահատումը նախաձեռնելուց հետո 60 աշխատանքային օրվա ընթացքում:</li> <li>Այն դեպքում, երբ ԾՀԱՄ-ը խորհուրդ է տալիս անցում կատարել Համապատասխանության վերանայմանը, ամփոփվում է Համապատասխանության գնահատման հաշվետվությունը և տեխնիկական առաջադրանքը շրջանառվում է Կողմերին ԾՀԱՄ-ի կողմից Համապատասխանության գնահատում նախաձեռնելուց հետո 60 աշխատանքային օրվա ընթացքում:</li> <li>Այնտեղ, որտեղ կիրառելի է, Բանկի ղեկավարությունը կունենա 21 աշխատանքային օր Դիմումին գրավոր պատասխան ներկայացնելու՝ ԾՀԱՄ-ի պահանջի օրվանից սկսած:</li> <li>Այնտեղ, որտեղ կիրառելի է, Դիմումատուները, Բանկի ղեկավարությունը և Հաճախորդները Գնահատման վերանայման տեխնիկական առաջադրանքի նախագիծը մեկնաբանելու համար կունենան 10 աշխատանքային օր՝ սկսած ԾՀԱՄ-ի՝ այն շրջանառության մեջ դնելու օրվանից:</li> </ul> |

| Փուլ                        | Հիմնական գործողություններ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |
|-----------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Համապատասխանության ստուգում | <ul style="list-style-type: none"> <li>• Համապատասխանության ստուգման հաշվետվության նախագծի ամփոփում՝ Համապատասխանության գնահատման հաշվետվության հրապարակման պահից 140 աշխատանքային օրվա ընթացքում:</li> <li>• Դիմումատուները (կամ նրանց ներկայացուցիչները, եթե այդպիսիք կան) և Բանկի ղեկավարությունը Համապատասխանության ստուգման հաշվետվության նախագիծը մեկնաբանելու համար կունենան 10 աշխատանքային օր՝ ԾՀԱՄ-ի կողմից այն շրջանառելու օրվանից սկսած:</li> <li>• Այն դեպքերում, երբ ԾՀԱՄ-ն անհամապատասխանություն է հայտնաբերում. <ul style="list-style-type: none"> <li>o Բանկի ղեկավարությունը կունենա 30 աշխատանքային օր՝ սկսած Համապատասխանության ստուգման հաշվետվության նախագիծը ստանալու օրվանից, որպեսզի ԾՀԱՄ-ին ներկայացնի Կառավարման գործողությունների ծրագրի նախագիծը (և Ղեկավարության պատասխանը՝ առկայության դեպքում):</li> <li>o Դիմումատուները (կամ նրանց ներկայացուցիչները, եթե կան այդպիսիք) Կառավարման գործողությունների ծրագրի նախագիծը մեկնաբանելու համար կունենան 20 աշխատանքային օր՝ ԾՀԱՄ-ի կողմից այն շրջանառելու օրվանից սկսած:</li> <li>o ԾՀԱՄ-ը Կառավարման գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ Դիմումատուների (կամ ներկայացուցիչների) մեկնաբանությունները ստանալուց հետո կունենա 10 աշխատանքային օր՝ Համապատասխանության ստուգման հաշվետվությունն ավարտին հասցնելու համար:</li> <li>o Ղեկավարությունը Համապատասխանության ստուգման վերջնական հաշվետվությունը և Դիմումատուների (կամ Ներկայացուցիչների) մեկնաբանությունները ստանալուց հետո կունենա 15 աշխատանքային օր՝ Կառավարման գործողությունների ծրագիրն ավարտին հասցնելու համար:</li> </ul> </li> </ul> |
| Մոնիթորինգ                  | <ul style="list-style-type: none"> <li>• Մոնիթորինգի հաշվետվությունների ներկայացում. առնվազն կիսամյակային կտրվածքով, մինչ ԾՀԱՄ-ը որոշում կկայացնի, որ Խնդիրների լուծման համաձայնագիրը կամ Կառավարման գործողությունների ծրագիրը ամբողջությամբ իրականացվել է, ինչպես սահմանված է պարբերություններ 2.5 և 2.8- ում:</li> <li>o Բանկի ղեկավարությունը կունենա 10 աշխատանքային օր՝ սկսած ԾՀԱՄ-ի՝ Կառավարման գործողությունների ծրագրի իրականացման մոնիթորինգի վերաբերյալ թարմացումներ ներկայացնելու հարցման օրվանից:</li> <li>o Կողմերը կունենան 10 աշխատանքային օր՝ մեկնաբանելու Խնդիրների լուծման վերաբերյալ մոնիթորինգի հաշվետվությունները՝ ԾՀԱՄ-ի կողմից այն շրջանառելու օրվանից սկսած:</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |

ո) **Ժամկետների երկարաձգում**

- i. **Թարգմանության նկատմամբ պահանջներ.** Թարգմանության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հավելյալ ժամանակ է պահանջվում այնպիսի Դեպքերին արձագանքելու համար, որոնց աշխատանքային լեզուն անգլերենը չէ: Դեպքի վարման յուրաքանչյուր փուլի համար նախատեսված Աշխատանքային օրերի քանակը չի ներառում Աշխատանքային այն օրերի քանակը, որը պահանջվում է անհրաժեշտ թարգմանությունները

պատվիրելու և ստանալու համար: ԾՀԱՄ-ը թարգմանությունների համար պահանջվող ցանկացած ուշացումների մասին ժամանակին կծանուցի Դիմումատուներին (կամ նրանց ներկայացուցիչներին, եթե այդպիսիք կան):

- ii. **Քացառիկ Դեպքեր.** Դեպքի հատուկ հանգամանքներով պայմանավորված՝ սույն Քաղաքականության մեջ նշված ժամկետները կարող են երկարաձգվել ԾՀԱՄ-ի որոշման կամ Դիմումատուների հարցման

հիման վրա այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է՝ Դիմումների և/կամ Դեպքերի ամբողջական քննությունն ապահովելու նպատակով: Երկարաձգման վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակ ԾՀԱՄ-ը հաշվի է առնելու հետևյալ գործոնները, որոնք ներառում են հետևյալը (բայց չեն սահմանափակվում դրանով). կարողությունների վերաբերյալ Դիմումատուների կողմից նշված ցանկացած խնդիրներ, Ծրագրի գտնվելու վայրը, Դեպքերի կարգավորման գործընթացում Կողմերի մասնակցության կարևորությունը՝ ներառյալ ԾՀԱՄ-ի հաշվետվությունների վերաբերյալ մեկնաբանությունների տրամադրումը, հաշվեհարդարի ռիսկերի գնահատումը և հաշվեհարդարի ռիսկերի մեղմացմանն ուղղված գործողությունների իրականացումը, Ծրագրին և Դեպքին առնչվող և ժամանակային սահմանափակում ունեցող խնդիրները, ԾՀԱՄ աշխատակազմի հասանելիությունը, մատչելիության և բնակեցման միջոցառումների իրականացումը՝ ինչպես սահմանված է 3.2 պարբերությամբ, ինչպես նաև 3.1(դ) պարբերությամբ սահմանված՝ հարակից Դիմումների քննարկումը: ԾՀԱՄ-ը Կողմերին անհապաղ կծանուցի Դեպքի հետ կապված ցանկացած երկարաձգումների մասին և կգրանցի երկարաձգումները Դեպքերի հաշվառման գրանցամատյանում: Երկարաձգումները պետք է սահմանափակ լինեն ժամկետային առումով, և եթե դրանց նորացման հետագա անհրաժեշտությունն առաջանա, բոլոր Կողմերը կտեղեկացվեն այդ մասին:

### 3.2 Իրազեկում և վերապատրաստում

- a) **Իրազեկման մանդատ:** ԾՀԱՄ-ի՝ իր մանդատը կատարելու կարողությունը կախված է նրա՝ շահագրգիռ կողմերի հետ արդյունավետորեն համագործակցելու կարողությունից: ԾՀԱՄ-ի մանդատը ներառում է իրազեկման գործողությունների իրականացում, թե՛

ներքին և թե՛ արտաքին շահագրգիռ կողմերի շրջանակներում՝ սույն Քաղաքականության և ԾՀԱՄ-ի նպատակի, գործառույթների և գործողությունների վերաբերյալ ավելի լայնածավալ գիտելիքների և ըմբռնումների խթանման նպատակով: Այդ նպատակով ԾՀԱՄ-ը կմշակի իրազեկման ծրագիր: Իրազեկմանն ուղղված ջանքերն, անհրաժեշտության դեպքում, կներառեն համագործակցություն այլ հաստատությունների հաշվետվողականության մեխանիզմների հետ:

- b) **Հասանելիության խոչընդոտների նվազեցում:** ԾՀԱՄ-ը փորձում է վերացնել այն արգելքները, որոնք խոչընդոտում են շահագրգիռ կողմերի համար ԾՀԱՄ-ի հասանելիությանը, Դեպքերի մեջ ներգրավվածությանը կամ իրազեկման նախաձեռնությունների մասնակցությանը: ԾՀԱՄ-ը կփորձի ներգրավել այն երկրների կամ տարածքների Խոցելի խմբերին, որտեղ ՎՉԵԲ-ը գործունեություն է ծավալում, և նպաստել շահագրգիռ կողմերի համար հասանելիությանը Էֆեկտիվ և ծախսարդյունավետ կերպով:

- c) **Հասանելիության ապահովում՝ ներգրավմանը նպաստող տպագրական նյութերի միջոցով:** ԾՀԱՄ-ի մանդատի, քաղաքականությունների, գործառույթների և գործողությունների մասին արտաքին և ներքին շահագրգիռ կողմերի պատկերացումներն ընդլայնելու նպատակով ԾՀԱՄ-ը կմշակի, կհրապարակի և կբաժանի ներգրավվածությանը նպաստող մի շարք նյութեր: Հնարավորության դեպքում, ԾՀԱՄ-ը նմանատիպ նյութերի մշակման վերաբերյալ արտաքին խորհրդատվություն կանցկացնի՝ Ծրագրի ազդակի առձանց համար հասանելիությանը նպաստելու նպատակով: ԾՀԱՄ-ը կունենա նաև ինտերակտիվ կայք, որի միջոցով տեղեկություններ և նյութեր կտարածի իր կատարած աշխատանքների վերաբերյալ: ԾՀԱՄ-ը կխրախուսի իր Գլխամասային գրասենյաների և Մշտական գրասենյակների աշխատակիցներին ներառել ԾՀԱՄ-ի



վերաբերյալ տեղեկությունները Բանկի այլ գործողությունների և հրապարակումների մեջ: Բանկի աշխատակիցներին կիրախուսեն աջակցել ԾՀԱՄ-ին՝ իր մանդատն ու գործառնությունները հանրայնացնելու ջանքերում:

d) **Հասանելիության ապահովում**

**լեզվի միջոցով.** ԾՀԱՄ-ի նպատակն է ներքին և արտաքին շահագրգիռ կողմերի շրջանակներում ահապահել արդյունավետ հաղորդակցություն և հրապարակել իր հաշվետվությունների ու գործողությունների վերաբերյալ տեղեկությունները: Չնայած նրան, որ անգլերենը համարվում է ԾՀԱՄ-ի աշխատանքային լեզուն, ԾՀԱՄ-ը կփորձի, անհրաժեշտության դեպքում, իր հաշվետվություններն ու հաղորդակցման նյութերը հասանելի դարձնել համապատասխան լեզուներով՝ ԾՀԱՄ-ի հասանելիությունն ապահովելու և պահպանելու համար:

Սույն Քաղաքականությունը հասանելի կլինի անգլերեն, ռուսերեն և արաբերեն լեզուներով և աստիճանաբար կթարգմանվի ՎՉԵԲ-ի գործունեության այլ երկրների կամ տարածքների պաշտոնական լեզուներով:

Եթե ԾՀԱՄ-ի Դեպքի Կողմերից մեկը կամ շահագրգիռ կողմերի որևէ խումբ չի խոսում անգլերեն, ԾՀԱՄ-ը ջանքեր կգործադրի բանավոր և գրավոր թարգմանությունների միջոցով հաղորդակցությունը հասանելի դարձնել համապատասխան լեզվով: Լեզվին առնչվող խոչընդոտները վերացնելու նպատակով:

- i. Դիմումները կարող են ներկայացվել ՎՉԵԲ-ի գործունեության ցանկացած երկրի կամ տարածքի պաշտոնական լեզուներով կամ ՎՉԵԲ-ի պաշտոնական լեզուներից ցանկացածով (այսինքն՝ անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն),

- ii. Այն դեպքերում, երբ Կողմերը չեն խոսում անգլերեն, ԾՀԱՄ-ի նամակագրությունը Դիմումատուների հետ (կամ նրանց ներկայացուցիչների հետ, եթե կան այդպիսիք), իրականացվելու է թե՛ այն լեզվով, որով ներկայացվել է Դիմումը և թե՛ անգլերենով:

- iii. Դեպքին առնչվող հանդիպումների և իրազեկման միջոցառումների ժամանակ, ըստ հարցման կամ ըստ անհրաժեշտության, կտրամադրվեն բանավոր թարգմանության ծառայություններ՝ համապատասխան լեզուներով:

- iv. Եթե Դիմումատուները (կամ նրանց ներկայացուցիչները, եթե այդպիսիք կան) չեն խոսում անգլերեն, ապա ԾՀԱՄ-ի՝ Դեպքին առնչվող գեկույցները կթարգմանվեն այն լեզվով, որն օգտագործվել է Դիմումը պատրաստելու ժամանակ, և

- v. Իրազեկմանն ուղղված նյութերը հասանելի կլինեն անգլերենով, ռուսերենով և արաբերենով և աստիճանաբար կթարգմանվեն այն երկրների կամ տարածքների պաշտոնական լեզուներով, որտեղ ՎՉԵԲ-ը գործունեություն է ծավալում:

- e) **Ուսուցում.** ԾՀԱՄ-ը սույն Քաղաքականության կիրարկման հետ կապված վերապատրաստումներ և ճանաչողական գործընթացներ պետք է իրականացնի Բանկի աշխատակազմի և արտաքին շահագրգիռ կողմերի համար: Ուսուցողական նախաձեռնությունները պետք է հարմարեցվեն ուսուցման և կարողությունների զարգացման կարիքներին, որոնք սահմանվել են ուղիղ հետադարձ կապի և Դեպքերի վարման արդյունքում ստացված փորձառության հիման վրա:

2 Անգլալեզու փաստաթղթի տեքստի և նամակագրության կամ փաստաթղթի այլ լեզվով գրված տեքստի միջև որևէ անհամապատասխանության առկայության դեպքում կգերակշռի անգլերեն տարբերակը:

f) **Ինստիտուցիոնալ ուսուցում.**

Ինստիտուցիոնալ ուսուցումը խթանելու և Կառավարման միջոցառումների ծրագրի ստանձնած պարտավորությունները ՎՉԵԲ-ի ծրագրերում ներառելու նպատակով, ԾՀԱՄ-ը պարբերաբար կիրականացնի քաղված դասերի վերաբերյալ փորձի փոխանակում և ուղեցույց կառաջարկի Բանկի ղեկավարությանը՝ հիմնվելով Դեպքերի վարման գործընթացներից ստացված իր պատկերացումների, փորձառության և ապացույցների վրա: ԾՀԱՄ-ի ուղեցույցում ու քաղված դասերում կներկայացվեն ընդհանուր և փոխկապակցված մարտահրավերները, կտրամադրվեն կառուցողական առաջակություններ, և այդ ամենը կնպաստի ՎՉԵԲ-ում շարունակական ուսուցման մշակույթի զարգացմանը:

ԾՀԱՄ-ը Բանկի ղեկավարության հետ կկիսվի քաղված դասերով և դրանց հետ կապված ցանկացած առաջարկություններով, եթե բավարարվի հետևյալ բոլոր չափանիշներին՝ համապատասխանելու պահանջը.

- i. այդպիսի դասերն ուղղակիորեն առնչվում են ԾՀԱՄ-ի մանդատին՝ խնդիրները լուծելու կամ հաստատելու Բանկի համապատասխանությունը Ծրագրին ներհատուկ դրույթներին՝ Բնապահպանական և սոցիալական քաղաքականության կամ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության ներքո, և
- ii. քաղված դասերը անդրադառնում են նշանակալի կամ ազդեցություն ունեցող խնդիրներին կամ միտումներին, որոնք կարող են հայտնաբերվել ԾՀԱՄ-ի Դեպքերի քննության միջոցով:

Ինստիտուցիոնալ ուսուցման նախաձեռնություններն իրականացվելու են ԾՀԱՄ-ի հայեցողությամբ: ԾՀԱՄ-ը համապատասխանաբար կտեղեկացնի այդ մասին Բանկի ղեկավարությանը, ինչպես նաև Վերահսկող և Գնահատող վարչություններին՝ աշխատանքների կրկնօրինակումից խուսափելու

նպատակով: ԾՀԱՄ-ը առանցքային դասերը և դրանց հետ կապված առաջարկությունները կներկայացնի.

- a. գրավոր, և դրանք կներկայացվեն հանրությանը Տարեկան հաշվետվության միջոցով՝ ինչպես նկարագրված է Բաժին VIII-ում և իրազեկման այլ նյութերի միջոցով՝ ըստ անհրաժեշտության,
- b. սեմինարների և Բանկի հետ համագործակցության այլ ուղղակի մեթոդների միջոցով,
- c. ՎՉԵԲ-ի քաղաքականությունների նախագծերի կամ երկրների և ոլորտային ռազմավարությունների վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունների ներկայացման միջոցով՝ այն դեպքերում, երբ ԾՀԱՄ-ը դա անհրաժեշտ կհամարի, և
- d. Խորհրդին՝ Տարեկան հաշվետվությունները ներկայացնելիս, կամ ըստ անհրաժեշտության:

ԾՀԱՄ-ը կարող է համագործակցել Բանկի ղեկավարության հետ՝ ԾՀԱՄ-ի ինստիտուցիոնալ ուսուցման առաջակությունների արդյունքում Բանկի կողմից կատարած փոփոխությունները փաստաթղթավորելու նպատակով:

### 3.3 Ինստիտուցիոնալ և վարչական դրույթներ

a) **ԾՀԱՄ-ի Ղեկավարը.**

- i. **ԾՀԱՄ-ի Ղեկավարի պարտականությունները.** ԾՀԱՄ-ի ղեկավարը պատասխանատու է ԾՀԱՄ-ը ղեկավարելու, սույն Քաղաքականությունը իրականացնելու և սույն Քաղաքականության ներքո ԾՀԱՄ-ի պարտականությունն հանդիսացող որոշումները կայացնելու համար: ԾՀԱՄ-ի Ղեկավարը ուղղակիորեն հաշվետու է Խորհրդին. ԾՀԱՄ-ի Ղեկավարը չի հանդիսանում Բանկի ղեկավարության մաս և չի գեկուցում վերջինին:

ii. **ԾՀԱՄ-ի Ղեկավարի նշանակման նախապայմանները.** ԾՀԱՄ-ի Ղեկավարը սույն պաշտոնում նշանակվելուց առաջ պետք է առնվազն 5 տարի աշխատած չլինի ՎՉԵԲ-ի որևէ պաշտոնում (օրինակ՝ գործող հիմնական անձնակազմում կամ որպես տնօրեն, փոխտնօրեն կամ տնօրենի խորհրդական): ՎՉԵԲ-ի խորհրդատուները իրավասու չեն հանդես գալ որպես ԾՀԱՄ-ի ղեկավար, քանի որ ՎՉԵԲ-ի հետ ունեցած իրենց պայմանագրի ավարտից հետո առնվազն երեք տարի չի անցել:

iii. **ԾՀԱՄ-ի Ղեկավարի ընտրություն և նշանակում.** ԾՀԱՄ-ի Ղեկավարն ընտրվում է Բանկի ներսում և դրանից դուրս գործունեություն ծավալող վեց անդամներից բաղկացած Ընտրական հանձնաժողովի կողմից, որը բաղկացած է Վերահսկիչ հանձնաժողովի նախագահից և փոխնախագահից, Բանկի ղեկավարության երկու ներկայացուցիչներից և հաշվետվողականության և սոցիալական կամ բնապահպանական ոլորտներում փորձ ունեցող արտաքին երկու շահագրգիռ կողմերից, որոնք ցուցաբերում են բարեվարքություն, անկախություն, ինչպես նաև Կողմերի ու քաղաքացիական հասարակության հետ արդյունավետ համագործակցելու կարողություն և Բանկի կամ նպանատիպ հաստատությունների հետ համագործակցության փորձ ունեն:

Ընտրական հանձնաժողովը ղեկավարվում է Վերահսկիչ հանձնաժողովի նախագահի կողմից, իսկ վարչական բնույթի բոլոր գործընթացներով զբաղվելու է ՎՉԵԲ-ի՝ մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը: ՄՌԿ բաժինը, խորհրդակցելով Ընտրական հանձնաժողովի հետ, նշանակելու է կադրերի հավաքագրմամբ զբաղվող համապատասխան ընկերություն, որը լայնածավալ որոնումներ կիրականացնի և կնախապատրաստի թեկնածուների ցուցակը: Այնուհետև Ընտրական հանձնաժողովը կուսումնասիրի

թեկնածուների վերջնական ցուցակը, թեկնածուների հետ կիրականացնի տեխնիկական սրբինինգներ և հարցազրույցներ ու կառաջադրի թեկնածու՝ ձայների մեծամասնության սկզբունքով: Ընտրության ընթացակարգերի ավարտից հետո Ընտրական հանձնաժողովը Տախագահին առաջարկություն կներկայացնի ԾՀԱՄ-ի Ղեկավարի ընտրության վերաբերյալ: Մինչ ընտրության գործընթացի ավարտը կազմակերպվելու է Վերահսկիչ հանձնաժողովի առջև առաջադրվող թեկնածուի լսման գործընթաց: Այնուհետև Տախագահը խորհրդակցելու է Խորհրդի հետ Գործադիր նիստում՝ նախքան Խորհրդին հաստատման պաշտոնական առաջարկություն ներկայացնելը: ԾՀԱՄ-ի Ղեկավարը պետք է նշանակվի բարձր օղակների մակարդակով, ինչը հստակ արտացոլում է Մեխանիզմի դերը և ԾՀԱՄ-ի Ղեկավարի գործառնությունների կարևորությունը Դեպքերի կարգավորման գործընթացում:

iv. **ԾՀԱՄ-ի Ղեկավարի նշանակման ժամկետը.** ԾՀԱՄ-ի Ղեկավարը նշանակվում է մինչև չորս տարի նախնական ժամկետով, որը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով: Ժամկետի (-ների) ավարտից կամ պաշտոնից հեռացվելուց հետո, ԾՀԱՄ-ի Ղեկավարն իրավասու չէ վճարվող ծառայություններ մատուցել ՎՉԵԲ-ին:

v. **ԾՀԱՄ-ի Ղեկավարին վճարվող փոխհատուցումը.** Վերահսկիչ հանձնաժողովը կուսումնասիրի ԾՀԱՄ-ի Ղեկավարին առաջարկվելիք պարգևավճարների փաթեթը և դրա վերաբերյալ առաջարկություններ կներկայացնի Տախագահին: ԾՀԱՄ-ի Ղեկավարն իրավասու չէ պարգևավճարներ ստանալ՝ ելնելով կատարողականի արդյունքներից:

Տարեկան աշխատավարձի նույն ինդեքսավորումը, որը Խորհրդի կողմից հաստատվել է Փոխնախագահների համար, կկիրառվի նաև ԾՀԱՄ-ի Ղեկավարի աշխատավարձի

նկատմամբ, եթե Խորհուրդը որևէ այլ որոշում չկայացնի: Վերահսկիչ հանձնաժողովի Տախագահը, խորհրդակցելով փոխնախագահների հետ, կանցկացնի ԾՀԱՄ-ի Ղեկավարի կատարողականի տարեկան քննություն, որը պետք է ավարտին հասցվի նույն ժամանակահատվածում, որը սահմանված է նաև Բանկի աշխատակազմի կատարողականի գնահատման համար:

vi. **ԾՀԱՄ-ի Ղեկավարի հեռացում.**

ԾՀԱՄ-ի Ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ընթացքում նրան որևէ պատճառաբանությամբ հեռացնելու վերաբերյալ որոշումը ենթակա է Խորհրդի կողմից հաստատման: Նման որոշումներ կայացվում են Վերահսկիչ հանձնաժողովի կողմից պատրաստված հաշվետվության հիման վրա, որը Տախագահը փոխանցում է Խորհրդին: Փոխանցվող փաստաթղթի մեջ Տախագահը կարող է իր անհամաձայնությունը հայտնել Վերահսկիչ հանձնաժողովի կողմից առաջարկված գործողությունների ընթացքի հետ: ԾՀԱՄ-ի Ղեկավարը կարող է պաշտոնից հեռացվել միայն այն հիմունքներով, որոնցով կարող են նաև որոշակի պատճառաբանությամբ հեռացվել աշխատակազմի անդամները: Տնօրենների խորհրդի՝ ԾՀԱՄ-ի Ղեկավարին հեռացնելու մասին որոշումը դիտարկվելու է որպես վարչական որոշում, որը ենթակա է ուղիղ բողոքարկման ՎՉԵԲ-ի Վարչական տրիբունալում, Բողաքարկաման ընթացակարգերի և Ընթացակարգի կանոնների համաձայն:

vii. **ԾՀԱՄ-ի Ղեկավարի վերանշանակում.**

Պաշտոնավարման առաջին ժամկետի ավարտից առնվազն վեց ամիս առաջ ԾՀԱՄ-ի Ղեկավարը գրավոր կերպով կտեղեկացնի Խորհրդին, թե արդյոք նա ցանկանում է պաշտոնավարել երկրորդ ժամկետով: Եթե այո, ապա Տախագահը Գործադիր նիստի ժամանակ կխորհրդակցի Խորհրդի հետ, և այնուհետև առաջարկություն կուղարկի Խորհրդին՝ դրա հաստատման

վերաբերյալ: Եթե ԾՀԱՄ-ի Ղեկավարը չի ցանկանում կրկին նշանակվել, կամ եթե նրա վերանշանակումը չի հաստատվում, ապա թափուր աշխատատեղի մասին հայտարարություն է տեղադրվում և նախաձեռնվում է ընտրության գործընթաց՝ ինչպես որ սահմանված է պարբերություն 3.3(ա)iii-ում:

- b) **Բյուջե.** ԾՀԱՄ-ի Ղեկավարը պետք է պատրաստի տարեկան բյուջե (ներառյալ ցանկացած պահուստային ֆոնդեր)՝ նշելով ռեսուրսների բավարար մակարդակը՝ ապահովելու, որ ԾՀԱՄ-ը արդյունավետ կերպով կատարի իր՝ սույն Քաղաքականությամբ սահմանված դերերը, պարտականություններն ու գործողությունները: ԾՀԱՄ-ի Ղեկավարը պատասխանատու է ԾՀԱՄ-ի վարչության ներսում ռեսուրսների բաշխման համար:

ԾՀԱՄ-ի բյուջեն պետք է ներկայացվի Խորհրդին՝ հաստատելու առանց առարկության և նույն ժամանակահատվածում, ինչպես որ Բանկի ընդհանուր բյուջեն, բայց որպես առանձին որոշում:

- c) **ԾՀԱՄ-ի աշխատակազմը.** ԾՀԱՄ-ի Ղեկավարը ղեկավարում է ԾՀԱՄ-ի աշխատակազմը, որի նկատմամբ կիրառվում են Բանկի կադրային քաղաքականությունն ու ընթացակարգերը: ԾՀԱՄ-ի Ղեկավարն ազատ է հաստատված բյուջեի սահմաններում կադրերի հավաքագրման վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում՝ առանց Բանկի ղեկավարությանը կամ Խորհրդին այդ հարցերում ներգրավելու: ԾՀԱՄ-ի աշխատակազմի աշխատավարձերը սահմանվում են ԾՀԱՄ-ի Ղեկավարի կողմից՝ Բանկի ՄՈԿ բաժնի հետ խորհրդակցության արդյունքում: ԾՀԱՄ-ի աշխատակազմի աշխատավարձերի բարձրացումը հիմնվում է Բանկի՝ մյուս աշխատակիցների նկատմամբ կիրառվող քաղաքականությունների և ընթացակարգերի վրա:

- d) **Իրավաբանական աջակցություն.**

Համաձայն Բանկի հիմնադրման մասին համաձայնագրի, Գլխավոր Իրավաբանի գրասենյակը հարցման հիման վրա ԾՀԱՄ-ին և Խորհրդին խորհրդատվություն կտրամադրի

ՎՉԵԲ-ի իրավական կարգավիճակին, իրավունքներին և պարտականություններին վերաբերող հարցերի, ինչպես նաև Բանկի այն քաղաքականությունների և ընթացակարգերի մեկնաբանման և իրականացման վերաբերյալ, որոնք առնչվում են Դիմումի մեջ նշված Ծրագրին: Գլխավոր Իրավաբանի գրասենյակը հարցման հիման վրա խորհրդատվություն կտրամադրի ԾՀԱՄ-ին և Խորհրդին այլ ընթացակարգային հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում են սույն Քաղաքականության ներքո քննվող ցանկացած Դիմումի և ցանկացած Դեպքի նկատմամբ ՎՉԵԲ-ի իրավունքներին և պարտականություններին՝ առանց սահմանափակելու Խորհրդի՝ Քաղաքականության դրույթների մեկնաբանման և կիրառման հետ կապված վերջնական որոշումներ կայացնելու իրավունքը: Գլխավոր Իրավաբանի գրասենյակը կհեշտացնի ԾՀԱՄ-ի համար մասնագիտացված իրավաբանական խորհրդատվության հասանելիությունը ՎՉԵԲ-ի գործունեության երկրների օրենքների և կանոնակարգերի հետ կապված հարցերի դեպքում:

- e) **Լրացուցիչ տեխնիկական փորձաքննություն.** ԾՀԱՄ-ը կարող է ներգրավել խորհրդատուներ՝ տեխնիկական հարցերի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու նպատակով: Ցանկացած այդպիսի խորհրդատու պետք է ընտրվի և ներգրավվի այդ գործընթացում համաձայն Գնումների կանոնների և պարբերություն 3.1(i)-ի, և այդ խորհրդատուն զեկուցելու է ԾՀԱՄ-ի Ղեկավարին:
- f) **Ներգրավվածություն ղեկավարության հետ.** Ղեկավարությունը կհրավիրի ԾՀԱՄ-ի Ղեկավարին ղեկավարության հանդիպումներին այն դեպքերում, երբ դա կարող է նպաստել հաղորդակցմանը և ընդհանուր խնդիրների ըմբռնմանը:
- g) **Հաշվետվություն.** ԾՀԱՄ-ի Ղեկավարը եռամսյակային հաշվետվություններ կներկայացնի Վերահսկիչ հանձնաժողովին: Լրացուցիչ ճեպագրույցներ կներկայացվեն Խորհրդին՝ ըստ հարցման կամ ըստ անհրաժեշտության:

## ԲԱԺԻՆ IV: ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՉԱՏՈՒՄ, ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

**Պարտավորություններից ազատում**  
Խորհուրդը կարող է թույլատրել շեղվել սույն Քաղաքականության այն պահանջներից, եթե Քաղաքականության պայմանները ուղղակիորեն թույլ չեն տալիս դա անել:

**Բացառություններ**  
Կիրառելի չեն:

**Հրապարակում**  
Սույն Քաղաքականությունը կհրապարակվի Բանկի կայքում՝ հաստատումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

## ԲԱԺԻՆ V: ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Քաղաքականությունը կիրառվելու է այն Դեպքերի նկատմամբ, որտեղ Դիմումը ներկայացվել և/կամ գրանցվել է ԾՀԱՄ-ի կողմից սույն Քաղաքականության VI-ի Բաժնի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո:

Այդ ամսաթվին նախորդող ժամկետներում ներկայացված Դեպքերը ենթարկվում են հետևյալ կանոններին.

- a) **Իրավասության շարունակական գնահատումներ:** Իրավասության շարունակական գնահատումների (ինչպես ներկայացված է ԾԲՄ-ի ընթացակարգի կանոններում) վերաբերյալ որոշումները կայացվելու են ԾՀԱՄ-ի Ղեկավարի կողմից, այլ ոչ թե ԾԲՄ-ի համաիրավասության գնահատողների կողմից (այսինքն՝ ԾԲՄ-ի պաշտոնյա և կից նշանակված ԾԲՄ փորձագետ՝ ինչպես որ յուրաքանչյուրի մասին սահմանված է ԾԲՄ-ի կանոններում և ընթացակարգում):
- b) **Խնդիրների լուծման շարունակական նախաձեռնություններ:** ԾԲՄ-ի փորձագետները (համաձայն ԾԲՄ-ի ընթացակարգի կանոնների), որոնք նշանակվել են որպես ԾԲՄ-ի խնդիրների

կարգավորման փորձագետներ,  
շարունակելու են իրենց գործունեությունը  
որպես գործընթացը դյուրացնող օժանդակ  
ուժ՝ գեկուցելով, այնուամենայնիվ, ԾՀԱՄ-ի  
Ղեկավարին:

- c) **Համապատասխանության  
շարունակական վերանայումներ:**  
ԾՀԱՄ-ի Ղեկավարը իր հայեցողությամբ  
կորոշի, արդյոք ԾԲՄ-ի կանոնների  
և ընթացակարգի համաձայն  
սկսված, սակայն դեռևս չավարտված  
Համապատասխանության ստուգումը  
ավարտի է հասցվելու ԾԲՄ-ի փորձագետի  
կողմից, թե ենթարկվելու է սույն  
Քաղաքականության դրույթներին,  
այդ թվում՝ հաշվի առնելով արդեն  
իրականացված ստուգման ծավալը (և  
դրա տևողությունը) և այն, թե արդյոք  
ԾԲՄ-ի փորձագետն արդեն եկել է որևէ  
եզրահանգման: Ցանկացած նման որոշում  
և դրա կայացման պատճառները պետք  
է հրապարակվեն Դեպքերի հաշվառման  
գրանցամատյանում:

- Հավելվածներ՝**  
Հավելված Ա-ի բովանդակությունը Բաժին III-ի՝  
Ծրջանակների, մաս է կազմում.
- ԾՀԱՄ Դիմումի ձևաթուղթ
  - ԾՀԱՄ Դիմումի ձևանմուշ

## ԲԱԺԻՆ VI: ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ

Համաձայն պարբերություն 3.3(ա)-ի՝ սույն  
Քաղաքականությունն ուժի մեջ է մտնում  
ԾՀԱՄ-ի առաջին Ղեկավարի նշանակման  
օրվանից:

## ԲԱԺԻՆ VII: ԲԱԺԻՆ VIIՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

ԾՀԱՄ-ի Ղեկավարը հաշվետու է սույն  
Քաղաքականության համար:

ԾՀԱՄ-ի Ղեկավարը պատասխանատու է սույն  
Քաղաքականության համար:

## ԲԱԺԻՆ VIII: ՎԵՐԱՆԱՅՈՒՄ և ԶԵԿՈՒՑՈՒՄԳ

Սույն Քաղաքականությունը վերանայվելու է  
2024 թվականին:

ԾՀԱՄ-ը կպատրաստի Տարեկան  
հաշվետվություն, որում կներկայացվեն  
նախորդ ֆինանսական տարվանից  
գրանցված Դիմումները, Դեպքերի  
քննության արդյունքները, իրազեկման  
նպատակով անցկացված և ավարտված  
նախաձեռնությունները և ինստիտուցիոնալ  
ուսուցումը: Տարեկան հաշվետվությունները  
կներկայացվեն Խորհրդին և Նախագահին՝  
ի գիտություն, և դրանք հնարավորինս սեղմ  
ժամկետներում կհանրայնացվեն ԾՀԱՄ-ի  
վեբկայքի միջոցով:

## ԲԱԺԻՆ IX: ՀԱՐԱԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. ՎՉԵԲ-ի՝ Ծրագրերի  
հաշվետվողականության  
քաղաքականության ներքո Դեպքերի  
քննության ուղեցույց (GUI/2019/[ ]):
2. ՎՉԵԲ-ի՝ Բնապահպանական և  
սոցիալական քաղաքականություն  
(ՔԱԴ/2019/[ ]):
3. ՎՉԵԲ-ի՝ Տեղեկությունների  
հասանելիության քաղաքականություն  
(ՔԱԴ/2019/[ ]):



**EBRD contacts**

European Bank for Reconstruction and Development  
One Exchange Square, London  
EC2A 2JN  
United Kingdom

[www.ebrd.com](http://www.ebrd.com)

**Switchboard/central contact**

Tel: +44 20 7338 6000

**Information requests**

For requests and enquiries, please go to  
[www.ebrd.com/inforequest](http://www.ebrd.com/inforequest)

*1096 Access to Information Directive  
© European Bank for Reconstruction and  
Development*